


Համայնքային

Հանրայայտ Լրագրող, Արցախի ու Հայաստանի մեծ Բարեկամ

ՑԻԵՏԱՆԱ ՓԱՍԿԱԼԵՒԱ

Կիպրոսի մէջ

Ուրբաթ 24 Փետրուար, 2012, երեկոյեան ժամը 7:30-ին՝ University of Cyprus-ի UNESCO սրահին մէջ, համախմբուած էր կիպրահայ ստուար հասարակութիւն մը՝ հանդիպելու համար հայասէր ու հայանուէր, պուլկարացի խիզախ լրագրող Փասկալեւայի հետ եւ դիտելու իր նկարահանած հոգեցունց ֆիլմաշարերէն մի քանին՝ «ՂԱՐԱԲԱՂԻ ՎԵՐՔԵՐԸ» խորագրեալ, նուիրուած Արցախեան ողբերգութեան: Ձեռնարկը կազմակերպուած էր Պետական Ներկայացուցիչի Գրասենեակին եւ ՀՅԴ Կիպրոսի Հայ Դատի յանձնախումբին կողմէ միասնաբար:



Բարեգալուստի խօսքով հանդէս եկաւ Կազմակերպիչ Յանձնախումբի անդամ Կարէն Գույումճեան, որ ողջունեց ներկայութիւնը յատկապէս՝ Կիպրոսի Գաղթականներու գերագոյն մարմնի յանձնակատար Պրն. Խրիստակիս Փասկալիսի, Գերապատիւ Վարուժան Արքեպիսկոպոսի եւ Պետ. Ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեանի: Ապա խօսքը փոխանցեց Պրն. Փասկալիսի, որ անդրադարձաւ հայ-յոյն ժողովուրդներու սերտ կապերուն, որոնք առաւել սերտացեր էին 2011-ի Յունուարէն ետք. ՀՀ

նախագահ Սերժ Սարգսեանի Կիպրոս պաշտօնական այցով եւ երկու երկիրներու միջեւ միջ-պետական համաձայնագիրներու ստորագրութեամբ: Ան կարեւորեց այդ բարեկամական կապերու ա՛լ աւելի սերտացումն ու անխախտ յարատեւումը...

Կարէն Գույումճեան այնուհետեւ ներկայացուց օրուան հիւրը՝ Արցախեան Դատի ջերմ պաշտպան, աշխարհաճանաչ լրագրող Յիետանա Փասկալեւան:

Ո՞վ է Յիետանա Փասկալեւան:

Յիետանա Փասկալեան ծնած է Պուկարիոյ մէջ եւ շրջանաւարտ է Սոֆիայի Թատրոնի եւ ֆիլմի արուեստներու Պետական Ակադեմիայի: 1990-ին, ան կը ստանձնէր իր դոկտորական ծրագրի պատրաստութեան աշխատանքը Մոսկուայի մէջ: Ապա կ'այցելէր Լեռնային Ղարաբաղ եւ ականատեսը կը դառնար՝ Շահումեանի, Մարտունաշէնի ողբերգական դէպքերուն, երբ ամբողջ այդ շրջանը անխնայ կը ռմբահարուէր ազերի ուժերու կողմէ, զօրակցութեամբը սովետական վարձկան զինուորներու...: Իր կեանքի այս հանգրուանին, Փասկալեան կ'որոշէր թողուլ իր դոկտորական ուսմունքը եւ մնալ Ղարաբաղ, նպատակ ունենալով վաւերագրել հայերու եւ ազերիներու միջեւ ընթացող հակամարտութիւնը, որուն մասին աշխարհն անտեղեակ էր ընդհանրապէս: Այսպէս, ան պիտի դառնար առաջին օտարազգի լրագրողը, որ յանձն պիտի առնէր վաւերագրել եւ աշխարհին ներկայացնել հայերու դէմ ի գործ դրուած զանգուածային խժոժութիւններն ու տեղահանումները հայրենական բնիկ տարածքներէ...:



Աւելի վերջ, երբ ամբողջական պատերազմ կը բռնկուէր հայերու եւ ազերիներու միջեւ, Փասկալեան կը դառնար կամաւոր լրագրողն ու վաւերագրողը՝ CNN, NBC, Ֆրանսական Անթենա 2 եւ Reuter լրատուական գործակալութեանց, ինչպէս նաեւ պուլկարական, ռուսական եւ գերմանական հեռուստացոյցի կայաններուն, մշտապէս տեղեկութիւններ հաղորդելով ճակատի ամենաթեժ

կետերէն: Ղարաբաղեան պատերազմի տարիներուն՝ 1991-1994, ան եօթը փաստագրական ֆիլմեր պիտի պատրաստէր պատերազմին մասին: Այդ ֆիլմերը պիտի ցուցադրուէին ԱՄՆ Քոնկրէսին, Գանատայի Խորհրդարանին, Միացեալ Ազգերուն..., ի պաշտպանութիւն ճշմարտութեան եւ ի լուսաբանութիւն Լեռնային Ղարաբաղի տագնապի իսկական բնոյթին: Յիետանա Փասկալեան արժանացած է բազմաթիւ մրցանակներու՝ ֆիլմի միջազգային փառատօներուն: Թէպէտեւ երբեք զէնք չէ կրած ան, այլ միայն՝ իր լուսանկարչական գործիքը, արժանացած է, սակայն, Ղարաբաղի Պաշտպանութեան Բանակի Գնդապետի կոչումին՝ 1995-ին եւ պարգևատրուած է արիութեան մետալով՝ Հայաստանի կառավարութեան կողմէ 1996-ին: Այժմ ան բնակութիւն հաստատած է Երեւանի մէջ, որոշած ըլլալով իր կեանքը նուիրել Ղարաբաղի Դատի վերջնական արդար լուծումին: Ան կը վարէ «Ճառագայթ» շաբաթական ծրագիրը, որ կ'առնչուի հայկական ընկերային հարցերու ներկայացման հետ եւ երբեք կը սփռուի հայկական հեռուստացոյցով ամէն շաբաթ:

Յիետանա Փասկալեան, նախքան «Ղարաբաղի Վերքեր» ֆիլմաշարի ցուցադրութիւնը, հանդէս եկաւ սրտայոյզ խօսքով, բացատրելով որ Շահումեանի, Մարտակերտի եւ այլ տեղերու մէջ տեղի ունեցած վայրագութիւնները՝ ազերի

ուժերու կողմէ, դարձան իրեն համար տեսակ մը մասնագիտական մարտահրաւեր, նկարահանելու համար այդ իրադարձութիւնները, որոնցմէ անտեղեակ գերտէրութիւնները, ի մասնաւորի, ինչ-որ որոշումներ կը կայացնեն, անհաղորդ մնալով



Ղարաբաղեան հակամարտութեան բուն իրականութեան:

Ուրեմն, այդ առաքելութիւնը ստանձնած լրագրողը կ'որոշէր թողուլ ուսումը Մոսկուայի համալսարանին մէջ, որպէսզի կարենար մնալ Ղարաբաղ եւ վաւերագրել կատարուող դէպքերը...:

Սկիզբէն եւեթ, ան յայտնեց որ ֆիլմաշարը զոր պիտի դիտենք,

շատ է ցաւալի, արինաթաթաւ...եւ ներողութիւն խնդրեց ներկաներէն ատոր համար: Ան յատկապէս շեշտեց, որ բոլորս պէտք է իմանանք Ղարաբաղի պատմութիւնը, որ հայոց պատմութեան անբաժան մէկ մասն է եւ ոգեշնչուինք այդ հերոսներուն աննկուն կամքով, զոր ի յայտ բերին անոնք, իրենց հողին վրայ ապրելու արդար իրաւունքը նուաճելու համար...: Երեք բաժիններէ բաղկացած ֆիլմաշարը խորապէս ցնցեց ներկաները՝ Շահումեանի, Գետաշէնի մէջ տեղի ունեցած սրտակեղեք տեսարաններով, ուր հայեր կը մաքառին ու կը պայքարին ամենէն անտանելի պայմաններու տակ, կառչած մնալու համար իրենց պապենական տան ու հողին, մինչ թշնամիին ռմբահարումները քար ու քանդ կ'ընեն տուներ ու աւաններ, կը վիրաւորեն մանուկ ու տարեց, կին ու երախայ...մահ ու աւեր սփռելով չորս դին:

Հայրենի օճախէն ու տարածքներէն բռնի հայրենահանման սրտաճմլիկ տեսարանները կարծեք հարազատ պատկերները ըլլային՝ շուրջ դար մը առաջ տեղի ունեցած բռնի տեղահանութեանց, այս անգամ Արեւմտահայաստանի բազմահազարամեայ բնօրրանէն, ի զործ դրուած օսմանեան պետութեան կողմէ...ամենէն վայրագ ու խուժդուժ եղանակով: Չէ՞ որ թուրքն ու ազերին «մէկ ազգ, երկու պետութիւն» են: Վերջապէս, նկարահանուած տեսարանները ցոյց կու տան, նմանապէս, հայու անկոտրում ոգին, տոկալու եւ դիմադրելու աննահանջ կորովը, ազատամարտիկներու խրոխտ, քաջարի եւ աննկուն վճռակամութիւնը՝ հերոսական սխրագործութեամբ նուաճելու համար իրենց պապենական հողին վրայ ապրելու արդարագոյն իրաւունքը...:

Այս քաջ ու հերոսական լրագրողն ու ճշմարտութեան եւ արդարութեան համար պայքարող աննկուն մարտիկը արժանի է ամէն գնահատանքի եւ քաջալերութեան: «Ես միշտ կու լայի, կը տանջուի սպանուած երախաներու, կանանց եւ ծերերու համար, կը վիրակապէի վիրաւորները, արինս կու տայի...» ըսաւ ան, եւ աւելցուց



որ այս ֆիլմաշարը ան պիտի տանի ամէն տեղ՝ Լիբանան, հարաւային Ամերիկա եւ այլուր, որպէսզի ամէնքը տեսնեն Ղարաբաղի ժողովուրդի կրած անպատմելի չարչարանքներն ու անոր ցուցաբերած հերոսական սխրանքի վաւերագրութիւնը... Եւ քաղաքական մարդիկ ու գերտէրութիւններ հայութեան տարած արդար յաղթանակը դիւանագիտական խաղաքարի չվերածեն...: Եւ՝ հարցադրումը: Աշխարհի քար խիղճը եւ գերտէրութեանց քաղաքական շիլ հաշիւները տեղի պիտի տա՞ն, ի վերջոյ, հայ ազատամարտիկներու սուրբ արեամբ նուաճուած հայրենական հողին վրայ խաղաղ ու անվրդով ապրելու արդարագոյն իրաւունքի ամրապնդման ու ամրագրումին:

Երան Գույումճեան

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Տիկ. Սօսի Թորոսեան եւ Զուակունք իրենց խորագգած շնորհակալութիւնները կը յայտնեն բոլոր անոնց, որոնք՝ յուղարկաւորութեան իրենց ներկայութեամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ, թէ այլապէս, մասնակից եղան իրենց սիրելի ամուսնոյն, հօր եւ մեծհօր՝

Ողբ. ՀԱՅՐԱՊԵՏ ԹՈՐՈՍԵԱՆԻ

մահուան սուգին եւ բաժնեցին իրենց կորուստի ցար:

Խմբագրական

ՀԱՅՐԵՆԻՔԸ ԿԸ ՍԿՍԻ ԸՆՏԱՆԻՔԷՆ



Ընտանիք կամ օճախ հասկացութիւնը սրբութիւն է եղած հայութեան համար՝ իր փոթորկայոյզ պատմութեան վերիվայրումներուն մէջ ի մասնաւորի, երբ ընտանիքը դարձեալ դարձեր է ամրակոտ ամրոց ու ապաստան, որ պահեր-պահպաներ ու սերունդէ սերունդ է փոխանցեր հայեցի շունչն ու ոգին՝ մեծաւ մասամբ հայ պետականութեան բացակայութեան պայմաններուն տակ:

Հայ օճախին նկատմամբ այդ վերաբերմունքը, գիտակից թէ անգիտակից, արտայայտուեր է հայ մարդուն կողմէ զանազան ձեւերով: Թուենք մի քանի օրինակ: Հայ մարդուն լաւագոյն մաղթանքներէն են եղեր՝ «Օճախդ շէն մնայ», «Տանդ ճրագը չմարի», «Եօթը որդով սեղան նստիս»...եւ նման բարեմաղթանքները: Եւ հակառակը, յոռեգոյն անեծքներէն են եղեր՝ «տունդ քանդուի», «օճախիդ լոյսը մարի» եւ նման այլ խօսքերը: «Հայրենի տուն» հասկացութիւնը ենթադրեր է մանրակերտը հայրենիքին,



հայրենի տան շէնութիւնն ու ամրութիւնը եղեր են գրաւականը ազգի կենսունակութեան: Հայը իր մերձատրին դիմեր է յաճախ «քոյր» կամ «եղբայր» անուանումով: Եւ, այսպէս, հայ ընտանիքը եղած է ազգային մեր արժէքային համակարգի գլխաւոր առանցքը, որուն գլխաւոր յենասիւնը, անտարակոյս, հանդիսացեր են մեր մայրերը սուրբ, որոնք իրենց շունչով են պահեր մեր հին ոգին կենդանի, սկսած իրենց երգած «օրօրոցային»ներէն, առ Աստուած յղած աղօթքներէն, պատմած հեքիաթներէն մինչեւ իրենց օրն ի բուն ցուցաբերած անսահման նուիրումը հանդէպ հայրենի տան ու օճախին, ազգային աւանդութիւններուն ու սրբութիւններուն, հայոց լեզուին ու հաւատքին կենսունակ պահպանման...: Ի գուր չէ որ մեր լեզուն անուանած ենք ՄԱՅՐԵՆԻ լեզու, իսկ մեր հայրենիքը՝ ՄԱՅՐ հայրենիք...:

Ներկայիս, մեր ժամանակներուն, կը քննարկէ՞նք երբեւէ, թէ որքա՞ն փոխուած է հայ ընտանիքին աւանդական պատկերը, անոր իտէալներն ու արժէքներու համակարգը, անոր կարգն ու սարքը, անոր լինելութեան կերպը: Այստեղ գուցէ ըսուի որ սա բնական երեւոյթ է: Փոխուած է աշխարհը, եւ անոր հետ՝ հայ ընտանիքը որոշապէս: Ուրեմն, թողու՞նք հարցերը ինքնահոսի վիճակի, չհարցադրէ՞նք, թէ ո՞ր են ներկայիս մեր ընտանիքները եւ ո՞ր կ'երթան...:

Կը հաւատանք որ այս հարցադրումները կարելոր են որպէս զգաստացման հարաւեր ու ինքնագիտակցութեան խթան՝ անհատական եւ հաւաքական մակարդակներու վրայ: Քանզի՝ հայ ընտանիքը, ներկայիս եւս, կորիզն է հայ ազգային հաւաքականութեան, բաբախող սիրտը անոր: Հետեւաբար, առո՞ղջ է ընտանիքը, առո՞ղջ է ազգը: Խարխո՞ւլ է ընտանիքը, խարխո՞ւլ է եւ ազգը:

Դեռ քանի մը տասնամեակներ առաջ, հայ ընտանիքը ամուր էր իր կառոյցով, իր հայեցիութեամբ, արժէքային համակարգով: Ամուր էր՝ ի մասնաւորի այնտեղ տիրող համերաշխութեան եւ իրարհանդուրժողութեան ոգիով: Սիրո՞ւլ: Այո, գլխագիր սերը տանելի կը դարձներ ամէն դժուարութիւն, զոհողութիւն ու զրկանք, նոյնիսկ չքաւորութիւն...: Իսկ Սէրը չէր պայմանաւորուած նիւթական հարստութեամբ, իրերու կուտակումով, բարեկեցութեամբ, հաճոյքներու վայելքով, զուարճանքով...: Սէրը ոգեկան երջանկութիւն էր գերազանցօրէն, անանձնական շեշտով, աւելի խորունկ ու մնայուն հոգեվիճակ մը, որ կարծէք կը ոգեզինէր ընտանիքի անդամները՝ դիմակայելու ամէն դժուարութիւն ու խոշընդոտ...:

Անհատապաշտութիւնն ու նիւթապաշտութիւնը, սպառողական ընկերութեան կարգն ու սարքը, սխալ հասկցուած կամ մեկնաբանուած ազատութիւնն ու մարդկային իրաւունքները, գործնապաշտ ու օգտապաշտ մտածելակերպը շրջեցին իրերու կացութիւնը, փլուզեցին արժէքներու համակարգը, սերն անգամ դարձնելով՝ սակարկելի, համերաշխութիւնը՝ դիւրաբեկ ու խոցելի, ընտանեկան սրբութիւնը՝ հազուագիւտ երեւոյթ...:

Այսօր, ի՞նչ արժէքներ կը գերակշռեն հայ ընտանեկան յարկերէն ներս ընդհանրապէս: Ազգային, բարոյական ու ոգեկան արժէքները, թե՞



օտարամոլութեան ու խորթ բարքերու, մամոնայի երկրպագութեան, նիւթական յաջողութեան, վայելքի ու զուարճանքի, ցուցամոլութեան խաբեպատիր արժէքները:

Ոսկէ հորթի այս պաշտամունքը քիչ մը ամէն տեղ է՝ Հայաստանի Հանրապետութենէն ներս, թէ Սփիւռքի օփերուն վրայ: Մինչ մեր հայրենիքէն ներս, զանգուածներ տուն-տեղ ձգած օտար երկնքներու տակ կ'որոնեն իրենց բախտը, զոհասեղանին վրայ դնելով երբեմն պատիւ ու արժանապատուութիւն, բարոյական ու ընտանեկան սրբութիւն..., Սփիւռք կոչուող ձուլարանին մէջ ալ, հայ մարդը յաճախ օտար ու խորթ արժէքներու խնկարկելով, իր հոգին կը ստրկացնէ անոնց, կը մոռնայ ազգ ու հայրենիք, տոհմիկ բարոյական ու արժէքներ...: Միաժամանակ, կ'ուրանայ պապենական կտակ ու ժառանգ՝ նոր ու սին երագներուն անձնատուր...:

Օտարին հրապոյրներուն կեղծ ու շինծու հմայքին տակ, հայը երբեւէ կը յիշէ՝ արդեօք արքենի կտակը Կիլիկիոյ Ռուբէն Գ. Իշխանին. «...Ո՛չ օտար փեսայ բեր, եւ ո՛չ օտար հարս, որպէսզի անոնք չտիրեն հայոց...»: Խորհմաստ այս պատգամը յայտնապէս կ'ենթադրէ ոչ միայն՝ օտար հարսի կամ փեսայի առկայութեամբ, այսինքն խառն ամուսնութեամբ օտարանալ, ինչ որ ահաւոր չափերու է հասած, այլ նաեւ՝ ինքն իրմէ, իր ազգէն ու էութենէն օտարանալ... գիտակցաբար թէ անգիտակցաբար...: Երեւոյթներ՝ որոնք ազգային ձուլման ու անհետացման բանալի ազդակներ են, հաստատապէս:

Պիտի տէր կանգնի՞նք հայ տոհմիկ ընտանիքին, քաջ գիտակցելով անոր վճռորոշ դերակատարութիւնը ազգին ապագայի կերտումին մէջ: Թէ՞ նորանոր նահանջներ արձանագրենք ազգային մեր գոյապայքարի ճանապարհին վրայ, սպառելով մեր մարդուծի որակն ու քանակը...: Պիտի խորամուխ ըլլա՞նք այն անհերքելի ճշմարտութեան, թէ ընտանեկան սուրբ յարկին տակ տրուած ընտանեկան դաստիարակութիւնն է հիմնական խարիսխը՝ մարդ էակի նկարագրի կազմաւորման, անոր ազգային-բարոյական ընկալումներու ձեւաւորման...: Իսկ ընտանեկան նման դաստիարակութեան գլխաւոր մատակարարը հայ մայրն է, անտարակոյս: Հարց տալու չէ՞նք, թէ մեր «գերքաղաքակիրթ» ժամանակներուն, ի՞նչ արժէքներով կը դաստիարակենք մեր զաւակները, եւ ի՞նչ սեփական օրինակով, վարք ու բարքով կը ներկայանանք անոնց: Կ'անդրադառնա՞նք արդեօք որ մեր արտաբերած իւրաքանչիւր խօսքը, ցուցաբերած վարքը, կատարած արարքը վճռական նշանակութիւն կրնան ունենալ՝ այդ յարկին տակ հասակ նետող հայ մատղաշ սերունդին վրայ:

Կ'արժէ մտաբերել եւ մեջբերել 20-րդ դարու ամենէն ակնառու փիլիսոփայ, Պերթրանտ Ռասէլի հետեւեալ խորապէս իմաստալից տողերը. « Եթէ բոլոր մարդիկ բարեկեցիկ ըլլային, եթէ աղքատութիւնն ու հիւանդութիւնը վերածուէին կարելի նուազագոյն չափերու, տակաւին շատ ընելիք պիտի մնար՝ ստեղծելու համար արժէքաւոր ընկերութիւն մը...»: Սա մտածել կու տայ, հաստատապէս, որ նոյն այդ ընկերութեան հիմնական առանցքը բարոյական արժէքներու համակարգն է: Իսկ ընկերութիւնը կը սկսի ընտանիքէն:



Նոյն տրամաբանութեամբ ալ, որքան տեղին կը հնչեն մեծ մանկավարժ Պօղոս Գեորգեանի խորիմաստ տողերը՝ «Ըլլաս ծնողք, ուսուցիչ թէ դաստիարակ, դաստիարակեա՛ զանձն քո»։ Էապէս զգաստացնող կոչ ու պատգամ՝ ծնողք կամ՝ դաստիարակ ըլլալու պարտականութիւնը ստանձնած անձերուն ուղղուած։ Կոչ՝ պատրաստուելու զգացումով, հոգեբանութեամբ, հոգեմտաւոր կերտուածքով, բարոյական արժէքներով եւ գիտակցութեամբ, խորագոյն այդ պատասխանատուութիւնը յանձն առնելէ առաջ։ Որովհետեւ՝ իրաւամբ ալ, Էական, ապագայակերտ եւ ճակատագրական դերակատարութիւն է վստահուած ընտանիքին, անոր սիւները կազմող ծնողաց։ Հայ ընտանիքն է որ պիտի պայմանաւորէ վաղուան հայ սերունդին ազգային ու մարդկային որակը հայոց ազգի ու հայրենիքի ապագան։

Եթէ կորսնցնենք հայ ընտանիքը, որ այնքան վտանգուած է մեր օրերուն, վստահաբար կը կորսնցնենք նաեւ ազգն ու հայրենիքը։ Ազգային Էական հիմնախնդիր ըլլալու է, այսօր՝ այս խոր գիտակցութիւնն ու պատասխանատուութիւնը ամրապնդել հայ հասարակութեան եւ ի մասնաւորի հայ ծնողաց մօտ, քանզի ծնողներն են գերազանցօրէն ազգի ու հայրենիքի ճարտարապետները։ Եւ որքան ճիշդ է ըսուած՝ ՀԱՅՐԵՆԻՔԸ ԿԸ ՄԿՍԻ ԸՆՏԱՆԻՔԷՆ։

Երան Գույումճեան

Հարցազրոյց

Նոր յեղափոխութեան սկի՞զբը

Հետեւեալ հարցազրոյցը անակնկալ կերպով տեղի ունեցաւ Փետրուարեան օրերուն, երբ նոր էր սկսած Երեւանի Մաշտոցի պուրակի համար պայքարող երիտասարդ բնապահպաններու հասարակական շարժումը։ Հարցազրոյցը կայացաւ Iragir.am-ի հետ։ Զայն ամբողջութեամբ կը ներկայացնենք մեր ընթերցողներու ուշադրութեան։

«Ազատ Խօսք» համացանցային թերթի խմբագիր Երան Գույումճեանը Կիպրոսից հետեւում է Մաշտոցի պուրակի պահպանման համար ձեւաւորուած շարժմանը



Տիկին Գույումճեան, Ֆէյսպուքում ակտիւօրէն աջակցում էք կանաչ տարածքների պահպանման համար պայքարող քաղաքացիներին։ Այս օրերին Հայաստանում տեղի ունեցող քաղաքացիական ակտիւութիւնը ինչպէ՞ս էք գնահատում։

Ես հեռուից հեռու հետեւում եմ այս խնդրին և շատ բարձր եմ գնահատում քաղաքացիական գիտակցութիւնն ու աշխուժութիւնը, երկրին տէր



կանգնելու վճռականութիւնը, որն այսօր ցուցաբերում են երիտասարդ և ոչ երիտասարդ ակտիւիստներն ու բնապահպանները:

Հնարաւոր է Հայաստանի փոփոխութիւնները հենց այս պայքարի շնորհիւ ազդարարուն:

Ամէն ինչ հնարաւոր է: Յիշում եմ, որ 1988-ի համազգային միասնութեան, հոգեկան վերելքի օրերը, բռնցքաւորումը՝ իրենց մեկնակէտը ունեցան բնապահպանական խնդիրների արծարծումը... Արցախ, Արցախ վանկարկումները ինչ-որ տեղ այսօր վերածուել են Երեւան-Երեւան կոչերի: Ես քաղաքացիական արթնացման նշաններ եմ տեսնում այս շարժման մէջ:

Այսինքն՝ այդ քաղաքացիական շարժումները հնարաւոր է վերածունեն քաղաքակա՞ն շարժումների:

Հնարաւոր է: Ի՞նչ է քաղաքականութիւնը լայն իմաստով՝ հաւաքականութեան ներդաշնակ ու բարօր կեցութեան ձեւերի փնտռտուք, իսկ նման կեցութեան համար կարելոր է, որ հանրութեան սեփականութիւնը հանդիսացող կանաչ տարածքներն ու պուրակները պահպանունեն:

Ձեր խօսքերից կարելի՞ է ենթադրել, որ այս ամէնը մի նոր յեղափոխութեան, նոր Հայաստանի սկիզբ են:

Ամէն նմանատիպ շարժում, որտեղ ներգրաւուած են մեծ թուով քաղաքացիներ ի պաշտպանութիւն իրենց քաղաքի, իրենց իրաւունքների՝ նոր գիտակցութիւն ու նոր մթնոլորտ է ստեղծում հաստատապէս, ինչպէս նաեւ քաղաքացիական և, ինչու չէ, քաղաքական նոր արթնացում, որ կարող է դառնալ նոր սկիզբ:

Ըստ Ձեզ, Հայաստանում իշխանութիւնները կարո՞ղ են ազդել քաղաքացիական հասարակութեան վրայ, ճնշել նրան:

Վստահաբար իշխանութիւնները կը փորձեն ճնշել, բայց աշխարհի իրավիճակները փոխուած են, ճնշումների ձեւերը չեն կարող այնքան բիրտ լինել, ինչպէս էին, օրինակ, Մարտի Մէկի բռնութիւնները մի քանի տարի առաջ, կարծում եմ իշխանութիւնները հետեւաբար տարբեր միջոցներ են գործադրում, ազդելու համար հասարակութեան վրայ:



Ի՞նչ միջոցներ կարող են այս անգամ կիրառել:

Թերևս կարող են խոստումներ տալ կամ նոյնիսկ երկխօսութեան կոչեր լինեն: Յամենայնդէպս, ես հաւատում եմ հայրենի այս երիտասարդութեանը, որ Թեղուտի հանքավայրի շահագործման դէմ իր հետեւողական պայքարով և այսօր էլ արդէն Երեւանի Մաշտոցի պուրակի պաշտպանութեան իր քաջարի վճռականութեամբ յոյս է ներշնչում

Հայաստանի վաղուայ նկատմամբ:

Հայաստանի ապագան այսօր արդէն երեւակո՞ւմ է:

Ես հաւատում եմ, որ իրաւատէր ու իրաւապահանջ երիտասարդութիւնն ու հասարակութիւնը՝ հետեւողական պայքարով անպայմանօրէն կը կարողանան բարեփոխել մեր երկրի կարգն ու սարքը և կ'երտել Հայաստանի նոր ապագան...

Lragir.am

«Ժամանակն է հրաժարուելու փրկիչներ որոնելուց ու առաջնորդապաշտութիւնից»

Հարցազրոյց «Մարդարապատ» շարժման նախաձեռնող խմբի համակարգող, Շուշիի առանձնակի գումարտակի նախկին հրամանատար Ժիրայր Սեֆիլեանի հետ:



-Լինելով ազատամարտիկ, ի՞նչ էր պատերազմի տարիներին պայքարը Ձեզ համար նշանակում և ի՞նչ է այն այսօր:

-Ազատամարտի ժամանակ պայքարը միտումն էր ատրպէյճանական տիրապետութիւնից Հայոց հինաւորց Արցախի ու արցախահայութեան ազատագրմանը, իսկ ներկայումս պայքարի նպատակը ազգային-ժողովրդավարական պետութեան կայացումն է, այնպիսի պետութեան, որը կ'ապահովի Հայ ազգի և Հայաստանի քաղաքացու ազատ ու ստեղծագործ կեանքը, հայութեան

համախմբումը, նրա իղձերի ու նպատակների իրագործումը, կ'երաշխաւորի անվտանգ, բարեկեցիկ ու արժանապատիւ ապագայ:

-Արդեօ՞ք արցախեան ազատամարտը տուեց այն, ինչ ակնկալում էիք:

-Մասամբ այո: Մեզ յաջողուեց ֆիզիքապէս ազատագրել Արցախի տարածքի մի մասն ու արցախցուն Ատրպէյճանի տիրապետութիւնից, սակայն գործը կ'իսատ մնաց: Հայաստանի Հանրապետութեան և Արցախի ղեկավարութեան կողմից բաւարար քաղաքական կամք ու վճռականութիւն չցուցաբերելու պատճառով թշնամու ձեռքին մնացին մեր Հայրենիքի արեւելեան հատուածի զգալի տարածքներ, իսկ փաստացի լուծուած Արցախեան խնդիրը արդէն երկու տասնամեակ վերածուել է իրաւաքաղաքական արհեստածին բրոպլեմի:

-Ի՞նչ էր պէտք անել:

-Պէտք էր առանց որեւէ արտաքին ուժի ազդեցութիւն հաշուի առնելու ռազմական յաջողութիւնը զարգացնել մինչեւ մեր տարածքների լիակատար ազատագրումը և աշխարհին փաստել Հայաստանի ու Արցախի վերամիաւորման 1989 թուականի Դեկտեմբերի 1-ի պատմական որոշումն ի կատար ածելու հանգամանքը: Ատրպէյճանը ԽՍՀՄ-ից անկախացել է որպէս 1918 թուականի Ատրպէյճանի Դեմոկրատական Հանրապետութեան իրաւաւոր, որի սահմանները երբեւէ չեն ներառել Արցախի տարածքը: Ուստի միջազգային իրաւունքի տեսակէտից մենք որեւէ բրոպլեմ չէինք ունենայ:



- Այսօրուայ հայը պատրա՞ստ է պայքարի դուրս գալ:

-Հայը միշտ պատրաստ է պայքարի: Հայը աշխարհի ամենակենսունակ ազգերից մէկն է, ինչի մասին վկայում է պատմութիւնը: Իսկ կենսունակութիւն հնարաւոր է ապահովել միայն պայքարի շնորհիւ: Համոզուած եմ, որ ներկայումս առկայ դժուարութիւնները եւս հայի համար յաղթահարելի են: Հայը ոչ միայն պատրաստ է այսօրուայ մարտահրաւերները յաղթահարելուն, այլեւ դրանց յաղթահարումից յետոյ աշխարհին ու մարդկութեանը ներկայանալու է միանգամայն նոր ու շատ աւելի արժանապատիւ կեցուածքով:

-Ձեր պայքարից յետոյ ստացուեց այն, ի՞նչ ակնկալում էիք:

-Թէ ինչպիսի պետութիւն ունենք հիմա, առանձնապէս ներկայացնելու կարիք չկայ, քանի որ գրեթէ բոլորի համար կարծես թէ ամէն ինչ պարզ է: Բնութագրեմ մի երկու նախադասութեամբ: Քրեաօլիկարիսիկ վարչախումբը նպատակ է դրել հաստատելու ֆեոտալական կառավարման համակարգով ամբողջատիրութիւն, որին հասնելու համար առանց խտրութեան կիրառում է իրեն հասանելի բոլոր միջոցները: Ծրագրուած ու հետեւողական կերպով իրականացում է հայ ժողովրդի համար գոյութեան անտանելի պայմաններ ստեղծող քաղաքականութիւն՝ ժողովրդի սպաւնշակութեամբ ու բարոյալքում, բնական պաշարների գիշատչական սպառում, որի հետեւանքով շրջակայ միջավայրը անհամատեղելի է դառնում կեանքի վերարտադրութեան ու առողջութեան պահպանման հետ, ամէն քայլափոխում մարդու պատուի ու արժանապատուութեան ոտնահարում ու անտեսում, աշխատանքի իրաւունքի ու տարրական կենսամակարդակի ապահովման, ինչպէս նաեւ մարդու կեանքի ու գոյքի ապահովութեան երաշխիքների ի սպառ բացակայութիւն, համատարած աղաղակող իրաւազրկութիւն ու խտրականութիւն, կոռուպցիա, կրթութեան ու գիտութեան արժեզրկում ու անկումայնացում: Այսպէս շարունակուելու դէպքում Հայաստանը կը վերածուի մարդկային կեանքի ու սերնդատուութեան համար վտանգաւոր և մարդու արժանապատիւ գոյութեան հետ անհամատեղելի մի տարածքի: Իսկ սա ոչ այլ ինչ է, եթէ ոչ դարաւոր թշնամու գործը շարունակող ցեղասպանական քաղաքականութիւն, որի հետեւանքով Հայրենիքն ամայանում է, իսկ ազգը հիւծւում ու արիւնաքամ է լինում շարունակուող զանգուածային արտագաղթից:

-Ի հարկէ, քիչ են այն երկրները, որտեղ ժողովուրդը գոհ լինի իր երկրի ղեկավարներից, մեզ մօտ էլ բացառութիւն չէ, խնդրեմ ասացէք, ի՞նչ էք կարծում, կա՞ն քաղաքակիրթ երկիր դառնալու յոյսեր: Այլ կերպ ասած, բացառութեան շարքում կը լինե՞նք:

-Մեր պարագայում խօսքը ոչ թէ կառավարութիւնից գոհ կամ դժգոհ լինելու մասին է, այլ, ինչպէս արդէն ասացի, ծրագրուած ու հետեւողական կերպով յանուն անձնական իշխանական նկրտումների ու նիւթական շահերի՝ իւրային ժողովրդի դէմ իրագործուող ցեղասպանական քաղաքականութեան և երկրի բնական, նիւթական ու մարդկային ռեսուրսների գիշատչական սպառման: Վարչախումբը օգտւում է այն հանգամանքից, որ ժողովրդի մեծ մասը դեռեւս գտնւում է խորհրդային իներցիայի ազդեցութեան տակ և իր քաղաքական կենսունակութիւնն ապահովելու ու յաւերժացնելու նպատակով Հայաստանում ձեւաւորում է հակահայկական և հակամարդկային խորհրդային քաղաքական մշակոյթի ու դրա համակարգի գաւառական և այլանդակ տարատեսակը՝ զուգահեռաբար ամէն կերպ խոչընդոտելով այլընտրանքային ազգային քաղաքական մշակոյթի ու համակարգի ձեւաւորմանը: Մինչդեռ սա քաղաքական-մշակութային փակուղի է, որից դուրս գալու միակ ելքը դրա ժխտումն է և նորի՝ հայկականի ստեղծումը, ինչի հենքի վրայ էլ կառուցուելու է հայկական նոր պետութիւնը: Բացառութիւն դառնալու կարիք չկայ, մի շարք ազգեր վերջին տասնամեակների ընթացքում կարողացել են յաղթահարել նման բարդութեան դժուարութիւններ և ստեղծել քաղաքակիրթ պետութիւններ: Մենք էլ կարող ենք և անելու ենք:



-Ըստ Ձեզ, կա՞ն երկրներ, որոնց ազդակները խանգարում են Հայաստանի զարգացմանը: Որո՞նք են այդ երկրները և ի՞նչ ազդակներ են ուղարկում:

-Հայաստանը գտնուում է այնպիսի տարածաշրջանում, որն ըստ էության աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական բազմաբնույթ ու բազմաբեկ շահերի կիզակետ է: Բնականաբար, բոլոր ուժային կեդրոնները, համաշխարհային և տարածաշրջանային տերությունները, ինչպես նաև Հայաստանի անմիջական հարեւանները Հայաստանի նկատմամբ վարում են իրենց շահերի սպասարկմանը կոչուած քաղաքականություն: Դա միանգամայն բնական ու նորմալ գործընթաց է: Հայաստանի վրայ այդ ուժային կենտրոնների և պետությունների մի մասի խիստ բացասական ու մտահոգիչ, որոշ առումներով՝ Հայաստանի անկախութեանն ու գերիշխանութեանը սպառնացող ազդեցությունը, ինչի որոշակի ակնարկն առկայ է Ձեր հարցում, պայմանաւորուած չէ դրանց բարի կամ չար լինելով: Իրական պատճառը Հայաստանի քրեաօլիկարխիկ վարչախմբի կողմից յանուն իշխանութեան պահպանման իր ոչ լեգիտիմ կարգավիճակը արտաքին լեգիտիմութեամբ մասամբ փոխարինելու նպատակով Հայաստանի անկախութեան ու գերիշխանութեան զիջումն է: Ազգային պետութեան ու լեգիտիմ կառավարութեան պարագայում այդ բրոպլեմը նման սրություն չի կարող ունենալ և իրավիճակը հետագայում կը մտնի ինքնիշխան պետությունների միջեւ միջազգային յարաբերությունների բնականոն ձեւաչափի մէջ:

-Կայ՞ մի ուժ, որի յետևից կարող է գնալ մեր ժողովուրդը, և որը կը լինի արժանապատիւ ապրելու հնարաւորութիւն:

-Ժամանակն է հրաժարուելու փրկիչներ որոնելուց ու առաջնորդապաշտութիւնից: Հայ ժողովուրդն ինքը պէտք է համազգային ներգրաւմամբ տէր կանգնի իր երկրին ու ճակատագրին և ի դէմս իր առաւել առաջադէմ զաւակների՝ քաղաքական ստեղծագործութեամբ գտնի այլընտրանքային լուծումներ:

-Անդրադառնանք ընտրութիւններին: Նախ ՏԻՄ ընտրութիւնների մասին: Ըստ Ձեզ ինչպէ՞ս դրանք անցան: Խնդրում եմ Ձեր գնահատականը:

-Ընտրակեղծիքներ, ընտրախախտումներ նկատուե՞լ են:

ՏԻՄ ընտրութիւնների օրինակով ընտրութիւնների մասին «Մարդարապատ» շարժման գնահատականը, ինչպես նաև ընտրութիւններին չմասնակցելու հիմնաւորումները բերուած են այդ առթիւ «Մարդարապատ» շարժման հրապարակային յայտարարութեան մէջ: Վարչախումբը լիակատար վերահսկողութիւն է հաստատել առկայ քաղաքական համակարգի վրայ և միանձնեայ կերպով թելադրում է խաղի բոլոր կանոնները: Նա ընտրութիւնների մեխանիզմը, ինչպես նաև տիրապետող քաղաքական համակարգի ներսում կուսակցութիւնների քաղաքական պայքարը վերածել է այդ համակարգի և իր կենսունակութեան սնուցման ու վերարտադրութեան հիմնական ու անյաղթահարելի գործիքի՝ բացառելով որեւէ այլ քաղաքական ուժի կողմից ընտրութիւնների միջոցով իշխանութեան հասնելու հնարաւորութիւնը: Նման պայմաններում ի՞նչ ընտրութիւնների կամ ընտրութիւններին մասնակցելու մասին կարող է խօսք լինել: Աւելին՝ ընտրութիւններին մասնակցութիւնը համարում եմ իշխանութիւնը իւրացրած յանցաւոր վարչախմբի կենսունակութեան սնուցման և նրա լեգիտիմութեան վերարտադրութեան մեղսակցութիւն:

-Պարոն Սեֆիլեան, Դուք ընդդիմութիւնն էք ներկայացնում, արդեօ՞ք համամիտ էք նրա բոլոր քայլերի հետ՝ ՀԱԿ-ի:

-Համամիտ լինել չլինելու հարցին կարծում եմ արդէն պատասխանեցի ընտրութիւնների վերաբերեալ իմ դիրքորոշմամբ:



-Ո՞րն է ապագայի Ձեր մաքերը:

-Ինչ վերաբերում է պետութեան նախընտրելի մոտելին, նրա կառավարման, ընկերային-տնտեսական և անվտանգային համակարգերին, ապա պէտք է տեղեկացնեմ, որ «Մարդարապատ» շարժման նախաձեռնող խմբի համադասմամբ մշակուում են ապագայ պետութեան ամբողջական ռազմավարական ծրագրի և անցումային փուլի հայեցակարգային հիմնադրոյթներ, որոնք շուտով կը ներկայացուեն հանրութեանը:

Ազատ Ձայն Լրատուական

«Տաղանդներին տէր կանգնելու մտածողութիւն է պէտք»

«Տաղարան» հնագոյն երաժշտութեան համոյթի դեկավար Սեդրակ Երկանեանի հետ:



-Կը պատմէ՞ք Ձեր համոյթի գործունէութեան մասին:

Սեդրակ Երկանեան-Համոյթը 30 տարեկան է: Համոյթն իր առջեւ խնդիր է ունեցել բեմ բարձրացնել մեր ժամանակներում արգելուած հայ հոգեւոր երաժշտութիւնը, աշխարհիկ երաժշտութիւնը, ինչպէս նաեւ Հայաստանում քարոզել եւրոպական, միջնադարեան և պարոքո երաժշտութիւնը, ինչը և մենք շարունակում ենք անել:

-Արդիւնքներից գո՞հ եք:

-Մենք մեր աշխատանքից առանձնապէս չենք դժգոհում, մեր խնդիրները կապուած են լուսաբանման, պետական և հասարակական վերաբերմունքի հետ: Մենք մեր գործն անում ենք, միշտ հանրութեանը ներկայանում ենք նոր ծրագրերով, հետաքրքիր կատարումներով, նոր մեկնաբանումներով, պարզապէս ցանկալի է այդ ամէնին հանրային, առաւել եւս պետական ուշադրութիւն, որովհետեւ եթէ արուեստի կողքին պետութիւնը կանգնած չէ, շատ դժուար է լինում ճանապարհը:

-Այսօրուայ մշակութային կեանքը հնարաւորութիւն տալի՞ս է ձեր ձայնը հասարակութեանը հասցնել:

-Մենք մեր ձայնն առաջին հերթին հասցնում ենք համերգների միջոցով: Սակայն Հայաստանում գործող գրեթէ բոլոր հեռուստաալիքները քարոզում են հիմնականում նոյնատիպ չակերտաւոր երաժշտութիւն, և շատ քիչ ալիքներ են դասական երաժշտութեանը տեղ տալիս: Դա շատ քիչ է, որպէսզի հասարակութիւն կրթուի:

-Մշակոյթի նախարարութեան դերը դաշտը կարգաւորելու հարցում, ինչպէ՞ս էք գնահատում:

-Մենք միշտ աւելին ենք սպասում, մենք՝ որպէս պետական համոյթ, Մշակոյթի նախարարութեան ենթակայութեան տակ ենք, և նա փորձում է մեզ օգտակար լինել, բայց ամէն դէպքում մենք ակնկալում ենք աւելի շատ, օրինակ՝ բարձր աշխատավարձ, ոչ թէ նուազագոյն աշխատավարձ,



ծրագրերն արտասահմանեան երկրներ տեղափոխելու օգնութեան կարիք ենք զգում: Բացատրում է, որ այդ հնարաւորութիւնները չունեն, իսկ մեծահարուստներն էլ այդ ճաշակը չունեն:

- Ձեր ստեղծագործական խումբը քանի՞ հոգուց է բաղկացած:

-Մեր ստեղծագործական խումբը կազմուած է 17 հոգուց՝ երաժիշտներ և երգիչներ: Մենք կարծէք իւրայատուկ դպրոց ենք դարձել կատարողական վարպետութեան առումով, որովհետեւ տասնեակ երաժիշտներ, որոնք աշխատել են մեզ մօտ այսօր զարդարում են Գերմանիան, Ամերիկան, Ֆրանսիան:

-Դա պետութեան մեղաւորութիւնը չէ՞ որ մեր տաղանդաւոր մարդկանց թոյլ է տալիս հեռանալ:

-Դա ոչ միայն մեղաւորութիւն է, այլ նաեւ յանցաւորութիւն է: Ոչ միայն երաժիշտներին, այլ նաեւ մեր մտաւոր և գիտական պաշարը բաց է թողնում:

-Պատճառը միայն աշխատավաճառն է, թէ՞ նաեւ պետութեան կողմից բաւարար չափով գնահատուած չլինելը:

-Ամէն ինչ այստեղ կարող էք ներառէք: Նախ՝ այստեղ պէտք են պետական բարձր մտածողութիւն, ազգային բարձր գիտակցութիւն հայ մարդու հանդէպ: Եթէ դու մարդուն գնահատում ես, նրան ոչ թէ 30 հազար դրամ աշխատավարձ ես տալիս, այլ մինիմում 300 հազար:

- Հասարակութեան մէջ Ձեր երաժշտութեան պահանջարկը կայ՞:

-Դա տեւական աշխատանք է: Մեր խումբը թէւ գործում էր աթէիստական ժամանակաշրջանում, բայց շատ աւելի լայն ճանաչում ունէր, մեծ լսարան ունէր, քան հիմա: Երկիրը փլուզուեց, մտաւորականութեան մի մասը դարձաւ հասարակութեան օտար և չմերուող, անկարող և դրա պատճառով տուժում են մեր նման երաժշտական մի շարք խմբեր: Մենք հիմա խնդիր ունենք նորից հասարակութիւն ձեւաւորելու:

-Իսկ ինչպէս էք գնահատում այսօրուայ սերնդին, նոր անուններ, տաղանդներ կա՞ն:

-Մենք տաղանդների պակաս չունենք, որովհետեւ ազգն աստուածատուր ազգ է, պարզապէս այդ տաղանդներին տէր կանգնելու մտածողութիւն է պէտք: Մենք հրաշալի սերունդ ունենք, հրաշամանուկներ ունենք, բայց նրանք մի քանի տարուց յետոյ մտածում են, թէ ոնց անեն՝ այս երկիրը լքեն, որովհետեւ այստեղ ապագայ չկայ, որովհետեւ տեսնում են, որ իրենց պրոֆեսորը մաքսիմում ստանում է 40 հազար աշխատավարձ: Մեզ մօտ հիմնականում երիտասարդներ են, ովքեր փորձում են այստեղ կայանալ, ամէն ինչ անում են այստեղից գնալը որքան հնարաւոր է յետաձգել:

-Գիտեմ, որ առաջիկայում համերգ ունէք, կը պատմէ՞ք այդ մասին:

Ամսի 23-ին համերգ ունենք, կարելի է ասել նոր ծրագիր է, նոր երգացանկով: Պախի, Պեթիովէնի գործերից կը հնչի: Տոմսի արժէքը 500 և 1000 դրամ է:

Mardik.am

Յօդուածներ

ՀԱՅԿԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՎ ՍՓԻՌՔԻ ԳՈՅԱՏԵԻՄԱՆ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆԸ ՈՒՆԻՆՔ

Դեռ մօտաւոր անցեալին, Սփիւռքը ենթակայ էր ինքնութեան կորուստի շրջապատի հասկնալի առանց ճիգի կատարուած նախապարձակումներու, բայց դեռ տոկալու եւ տեւելու կամքը հզօր էր, շնորհիւ ազգային լեզուի տիրական ներկայութեան, հայկական կառոյցներու հանդէպ նախանձախնդրութեան, հայրենիքի ամբողջացման հեռանկարի եւ ազատագրուած Հայրենիք (ոչ միայն Հանրապետութիւն) վերադարձի:



Հայրենահաւանման հետեւանք ծանօթ սփիւռքը այսօր նկարագիր փոխած է, երբեք լուրջ քննարկման չենթարկուող Հայաստանի Հանրապետութենէն եւ մասամբ ալ խորհրդային նախկին հանրապետութիւններէն տեղի ունեցած եւ շարունակուող աղէտ-արտագաղթի բազմերես հետեւանքներով: Այս աղէտ-արտագաղթը որպէս նախապարձակում սփիւռքի դէմ, տապանաքար դրած է վերադարձի փիլիսոփայութեան վրայ, որ տոկալու եւ տեւելու ոգեկանութիւնն էր: Երբ Հայեր զանգուածային կերպով հայրենիք կը լքեն, հսպիտի թափահարում կը դառնայ

վերադարձի մասին խօսուած ճառը: Արտագաղթողը չունի վերադարձի փիլիսոփայութիւն, վերադառնալու առաջադրանքով դուրս չէ եկած երկրէն, եւ այս կամաւոր հրաժարումը հոգեկան վարակ է նաեւ հայրենահանուածներու սփիւռքին համար:

Այս հարցը այցելութիւններու եւ շքանշաններու տուչութեան հրավառութիւններով հեռանկարային լուծում չի գտներ: Երեւոյթին դէմ թումբ կանգնելու քաղաքականութիւնը կը բացակայի, համապատասխան վերաբերում չի ձշղուիր: Բայց մենք կարծեք դադրած ենք հեռանկարային միտումներ ունենալէ եւ միութեան քարոզներով կ'օրօրուինք եւ կ'օրօրենք: Իրապաշտութիւնը դուռն է իմաստութեան: Սփիւռքը այսօր իր աշխարհագրական ցրուածութեամբ արդէն յոգնակի է: Իսկ այդ յոգնակիի ներքին կապերը կ'ապրուին չնչին փոքրամասնութիւններու կողմէ: Ինքնախաբէութիւն է խորհիլ որ սփիւռքները միացնող կապերը են ինչպէս անոնք էին անցեալին:

Այնքան հզօր են ցրումի ալիքը, ազգային լեզուի, մշակոյթի եւ ինքնութեան ազդակի դերի նուազումը: Իսկ այդ ազգային լեզուն, սփիւռքի պարագային, հայրենահանուած ժողովուրդի արեւմտահայերէնն էր, որ այսօր ենթակայ է ոչ միայն շրջապատի այլազան լեզուներու պարտադրած օտարումներուն (aliénation), այլ նաեւ սովետահայերէն դարձած արեւելահայերէնի՝ բառապաշարին եւ ուղղագրութեան, հեռատեսիլով, այցելութիւններով, զանգուածային արտագաղթի հետեւանքով,



մակերեսային հայրենասիրութենէ բխած կապկումներով: Թանգարան մը այցելութեան ընթացքին, ուր հայ գեղանկարիչի ցուցահանդէսը կը տեւէր քանի մը շաբաթ է Վեր, Էրի քաղաքին մէջ, տնօրէնութեան կողմէ պատի մը վրայ գրուած տող մը կարդացի. Une civilisation sans mémoire n'en est pas une (Conseil de l'Europe). Կը թարգմանեմ այս ընդհանրական իմաստութիւնը, զոր լսել պէտք է գիտնալ. «Առանց յիշողութեան քաղաքակրթութիւն մը այդպիսին չէ» (Եւրոպայի Խորհուրդ):

Հայկական սփիւռքը, սփիւռքները, ցարդ քաղաքակրթութեան մը ժառանգորդներն էին, ունէին իրենց յիշողութիւնը. բռնագրաւուած հայրենիք, լեզու, գրականութիւն: Այսօր այդ ժառանգութիւնը ամէն օր քիչ մը աւելի կ'ամփոփուի հետզհետէ նեղող շրջանակի մը մէջ, կը փոխարինուի կարգախօսներով եւ «ծագումով հայ» ըլլալու ոչինչ նշանակող դատարկաբանութեամբ: Իսկ լեզու, գրականութիւն, պատմութիւն ազգային նկարագրով արուեստներ յիշողութիւն են, եւ սփիւռքները աստիճանաբար կը կորսնցնեն այդ յիշողութիւնը, քաղաքակրթութիւն ստեղծելու անատակ կը դառնան, քանի որ առանց յիշողութեան քաղաքակրթութիւնը անհեթեթութիւն է:

Հայաճնունդներու կողմէ ստեղծուած եւ շրջապատի ժառանգութիւն ըլլալու կոչուած քաղաքակրթութիւնը ազգային ժառանգութիւն չէ, պիտի չըլլայ ազգային յիշողութիւն: Մեր պատմութեան սեւ եւ դժնդակ օրերուն, Հայաստանեայց Եկեղեցին, Վահան Թեքէեանի ներշնչուած բառերով, «նաւահանգիստ մըն էր ծփուն», ուր կրնայինք խարխիւ նետել, կապուիլ, չտարուիլ արեւելքէն եւ արեւմուտքէն փչող մրրիկներով: Այսօր նախայարձակման ենթակայ է նաեւ այդ պատնէշը, այդ նաւահանգիստին մեզ կապող ամուր պարանները կտրատողներ կան, ապագային եւ ապագայնացնող ուժեր, որոնք եկեղեցին կը շփոթեն այս կամ այն երկրի հիմնարկներու հետ, ենթակայ են ազգէն եւ եկեղեցիէն դուրս օրէնքներու:

Խօսքը չի վերաբերիր միայն անհարազատ շարժումներու, ինչպիսիք են աղանդները: Բայց նաեւ փառասիրութիւնները, չխոստովանուող շահախնդրութիւնները, նոյնիսկ ամենէն ցած մակարդակի: Այլեւս չենք ընդվզիր անգամ, երբ անհատներ կամ նոյնիսկ կազմակերպութիւններ, կ'ուզեն հեղինակագրկել Հայաստանեայց Եկեղեցին եւ անոր աւագ դէմքերը, իրենց պզտիկ անձերուն փառաւորումը հետապնդելով, քանի որ յաճախ պարպուած ենք ինքնութիւն կերտող բազմերես յիշողութենէ, որպէս հետեւանք անգիտութեան: Դիմակները պէտք է վար առնել, առանց ճկունութիւն խաղալու, առանց խուսանաւումներու, հիմնուելով ազգային հարազատ յիշողութեան եւ անկէ բխած արժէքներու վրայ: Այլապէս արեւուն տակ տեղ չի մնար նոյնիսկ մեր մանր ու անբովանդակ փառասիրութիւններուն:

ՅԱԿՈԲ ՊԱԼԵԱՆ

«Նոր Յառաջ»

Սուրիահայերը սկսե՞ր են Հայաստան գալ

Սուրիահայերը կը ցանկան Հայաստան գալ: Այնտեղ իրավիճակը խառն է, կրակոցներ կը հնչեն, պայթիւններ տեղի կ'ունենան... մարդիկ չեն գիտեր ինչքան կը տեւէ այդ ամէնը, կեանքը վտանգաւոր է դարձեր... Վազգէն Մեսրոպեանը մօտ 10 տարի է որ Հայաստան կը բնակի: Հալէպցի է, Սուրիոյ քաղաքացի, բայց հիմա կը մտածէ այնտեղի տունը վաճառել, քրոջն ու եղբօրը Հայաստան տեղափոխել:



«Ուզում ենք, ուզում ենք, ուզում ենք...», –կ'ըսէ Վազգէնը, Սուրիոյ մէջ այժմ տիրող իրավիճակը նմանցնելով 90-ականներու Հայաստանին: – «Զգիտենք՝ քանի՞ տարի պէտք է այսպէս լինի: Ահաբեկիչները հա՛տրաքացնում են, գողանում են սալեարկան, գողանում են պենզինը... ահաւոր վիճակ է»: «Ազատութիւն»

ռատիոկայանի հետ զրոյցներուն, սուրիահայերը ձեռնպահ կը մնային ըսելու, թէ ո՞վ կը կրակէ:

Կ'ըսէին՝ կառավարական ուժերը զինեալ ահաբեկիչները կը փնտռեն: Վազգէն Մեսրոպեանը կ'ըսէ թէ Սուրիան թողնելու համար հայերը եւս պատճառներ ունին՝ մարդիկը կ'առեւանգեն, գլխագին կը պահանջեն: Ան յիշատակեց դէպք մը՝ Հալէպի մէջ, հայ երիտասարդ մը առեւանգէր էին, եւ զայն վերադարձուցէր էին միայն այն բանէն ետք, երբ տեղի հայ համայնքը հայթայթէր էր պահանջուող գլխագինը: Ճորձը մէկ շաբաթ առաջ է եկել: Կ'ըսէ թէ՝ եթէ առաջ Հալէպի մէջ կրակոցներ չէին հնչեր, հիմա արդէն այնտեղ ալ կեանքն անվտանգ չէ:

«Մէկ շաբաթ առաջ երկու մեծ ռաբակոծութիւններ եղան Հալէպի մէջ: Ապահովութիւն դժբախտաբար չմաց: Այդ պատճառով այստեղ եկանք», – կը պատմէ ան: Ճորձն ու իր ընկերները եւս մէկ պատճառ ունին Սուրիան լքելու համար. անոնք աւարտեր են ուսումը, բանակ զօրակոչուելու խնդիր ունին, ընտանիքը գերադասեր է, որ իրենց որդիները Հայաստան գան՝ սուրիական բանակին մէջ չծառայեն: Շատ հայեր կ'ուզեն լքել Սուրիան, բայց տունը, ունեցուածքը, պիզները չեն կարող վաճառել, ցանկացողներն ալ չափազանց ցած գին կ'առաջարկեն:

Հայաստան գալէն յատկապէս ունեւորները ձեռնպահ կը մնան, մեզի հետ զրոյցի ընթացքին կ'ըսէր Վազգէն Մեսրոպեանը: «Ցաւօք սրտի, շատ վատ պրոպականտա է գնացել Հայաստանի մասին՝ այնտեղ մաֆիա կայ, չես կարող գործ անել... այս վատ պրոպականտայից մենք պէտք է դուրս գանք: Այդ էլ արդէն Հայաստանի պետութեան վրայ է: Մեր ցանկութիւնն է, որ այստեղ գալուց յետոյ զոնէ Հայաստանի

պետութիւնը մի քիչ տէր կանգնի», - կ'աւելցնէ ան: Սուրիոյ մէջ, այսօր 35-40 հազար հայեր կ'ապրին, հիմնական մասը՝ Հալէպի մէջ, Դամասկոսի մէջ:

Հոմսի մէջ, ուր այս օրերուն կը ծաւալուին ռազմական գործողութիւններ, ընդամենը 5-6 հազ ընտանիք կ'ապրի: Հայերը Սուրիոյ նախագահ Պաշար ալ-Ասատի իշխանութեան պահպանման կողմնակից են, անոնք՝ սիւննիներու իշխանութենէն կը վախնան:



«Հայ համայնքը պետութեան կողմից է: Մենք մեր նախագահի կողմնակիցն ենք: Սրան մենք գիտենք արդէն, որ լաւ նախագահ է ինքը, ժողովրդի լաւն է ուզում: Բռնապետ չէ՝ ոչ», -կ'ըսէ Վազգէն Մեսրոպեանը:

Սագո

Պասմաճեանը կ'աւելցնէ. -

«Սուրիոյ հայերու վիճակը շատ լաւ է: Մենք ունինք մեր

ակումբները, մեր դպրոցները: Մեր կեանքը շատ լաւ էր:

Դրա համար ուզում են, որ իշխանութիւնը նոյն ձեւի մնայ»: Ճորճը՝ Երեւանի մէջ, իր երկու ընկերներուն՝ Քրիսի եւ Սագոյի հետ աշխատանք կը փնտրէ: Եթէ աշխատանք չգտնեն՝ կ'ըսեն, կ'երթան Լիբանան: Տղոց խօսքով, հիմնական խնդիրը լեզուական է՝ արեւելահայերէն խօսուածքին չեն տիրապետեր, այդ պատճառով ալ, Հայաստանի մէջ գործ չեն կարողանար գտնել: Սուրիահայերը հիմնականին մէջ աշխատանքի կ'անցնին՝ աւելի վաղ Հայաստան եկած եւ այստեղ փոքր պիզնեսներ հիմնած սուրիահայերու մօտ: «Լաւ չեն վճարում, քիչ են վճարում, չենք կարողանում ապագայ կազմել», - կ'ըսէ Սագոն:

Սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեանի պնդումով, իրենց ընդամենը մի քանի սուրիահայեր են դիմեր: Անոնք ունին աշխատանքի, չունին՝ բնակարանի խնդիր: «Ես դիմում եմ մեր Զբաղուածութեան ծառայութեանը, Սոցալ նախարարութեանը, տարբեր իմ գործընկերներին, որովհետեւ Սփիւռքի նախարարութիւնը չէ, որ աշխատանքով պէտք է ապահովի: Իհարկէ, մեր խնդիրը նախեւառաջ առաջնութիւն տալ, օգնել, որովհետեւ նոր եկածները պէտք է կարողանան տնտեսութիւն տալ, օգնել, որովհետեւ նոր եկածները պէտք է կարողանան տնտեսութիւն տալ, օգնել, որովհետեւ նոր եկածները պէտք է կարողանան տնտեսութիւն տալ», - պարզաբանեց Յակոբեանը: Հայաստանի կառավարութիւնը Սուրիահայերուն վերաբերող պետական ծրագիր չունի, չնայած նախարարը կը պնդէր, որ Հայաստանը պատրաստ է օգնելու բոլոր անոնց, ովքեր կը գերադասեն հայրենիք թողնել: Հրանուշ Յակոբեանը նշեց, որ սուրիահայերու համար, դեռեւս ծրագիր չկայ, քանի որ Հայաստան եկողները առայժմ մեծ թիւ չեն կազմեր: Եթէ սուրիահայերու հոսքն աւելնայ, կարելի պիտի ըլլայ իրաքահայերու համար մշակուած ծրագրի նմանութեամբ ծրագիր մը կիրառել անոնց համար:

Օ՛, սրիկաներ, ահա Քաղաքը: Խուժէք կայարան...

Օ՛, սրիկաներ, ահա Քաղաքը: Խուժէք կայարան... Արեւմտանիստ սուրբ Քաղաքին էլ վերջապէս հասանք:



Ա. Ռեմպօ

Արտագաղթը սկսում է Մաշտոցի պուրակից: Ինձ համար այգու, ծառի արժէքը յաւիտենական է, եւ չի կարող ստորադասուել որեւէ այլ խնդրի: Այգին օրէցօր տրոհուող քաղաքում միակ վայրն է, որ պահպանում է մարդկային դիմագիծը, եւ այդ մարդկային դիմագիծը հնարաւոր է՝

հաղորդուի այդ պուրակներով զբօսնող, քայլող մարդկանց...

Այգին միակ տարածքն է, որը կրում է աստուածայինի եւ յաւերժականի դրոշմը: Մէկ ծառը աւելի մեծ արժէք ունի թէ բոլոր մարդ էակների եւ թէ տիեզերքի համար, քան Հիւսիսային պողոտայի սառը եւ ճնշող դիմագիծն ամբողջութեամբ:

Ինձ համար այգին տարանջատուած չէ միւս այգիներից ու բնութիւնից առհասարակ, սակայն կեանքի բերումով չորս տարեկանից ապրել եմ հենց այս նոյն այգու հարեւանութեամբ, մանկութեանս մեծ մասն անցկացրել եմ հենց Մաշտոցի պուրակում, ինձ ծանօթ է ամէն ծառը, թուփը, որոնցից շատերն արդէն վաղուց ոչնչացուել են: Չախ թելում գտնուող հսկայ կաղնու տակ թաղել եմ թուրակներին, որոնց ժամանակին պահում ու խնամում էի տանը....

Այս այգին իմ մանկութեան մի մասն է: Մեզ համար այն եղել է թէ ֆուրպոլի դաշտ, թէ մարտադաշտ, թէ ժամադրավայր... Բազմաթիւ ծառեր կտրուեցին սեւումուր տարիներին, սակայն բնակիչների ջանքերով նաեւ պահպանուեցին դրանցից շատերը:

Այդ իսկ պատճառով էլ իրաւասու եմ վկայել, որ տեղադրուած կրպակներն իննսուն տոկոսով տեղադրուած են կանաչ տարածքներում, եւ միայն աննշան մասով՝ այգու պերթոնէ քայլուղում:

Այգի չսիրող ակրեսիւ մշակոյթի լաւագոյն օրինակը Հիւսիսային պողոտան է. քանդուեց քաղաքի հին մասը, որտեղ խարխուլ եւ հողաշէն տների կողքին կային նաեւ լուրջ հետքորթութիւն ներկայացնող եւ բուն երեւանեան տներ, սակայն ամենակարեւորն այն է, որ չկար մի տուն, որը շրջապատուած չլինէր ծառերով: Այդ ամենի փոխարէն կառուցուեց անապատ՝ տեկորատիւ ծառերով:



Նոյնը կատարուեց Ժուռնալիստների միութեան շէնքի հարեւանութեամբ՝ Մաշտոցի 7 հասցեում, հանրային գրադարանին յարող պուրակում, Խանջեան փողոցի ամբողջ երկայնքով... : Պեթոնն անխնայ ոչնչացրեց բնութիւնը, եւ այդ ամէնն արուեց լրջագոյն, աննախադէպ ճնշումների միջոցով՝ երեւանցիների շահերը բացայայտօրէն ոտնահարելով:

Քաղաքում շէնքերը զրուցում են իրար հետ, ինչպէս յատուկ է քաղաքին, քաղաքայինին:

Զրոյցի մշակոյթն այնքան յատուկ է քաղաքին: Եւ զրոյցում իր բնական տեղն ունի այգին. այն շէնքերի միջեւ զրոյցի խօսուն միջնորդն է, զրոյցի կայացման երաշխիքը:

Հերթական այգու ոչնչացումը խաթարում է ճարտարապետական խօսքը:

Քանի որ բնական միջնորդն օտարուած է, քաղաքից ու քաղաքայինից դուրս օտար մարմին է:

Մի շէնքից յորդող խօսքը բախում է առեւտրական մշակոյթի յիսուն տոկոսանոց զեղչի մասին յայտարարող պեթոնէ պատին ու յետ գալիս: Զրոյցը վերածում է աղմուկի, անհաղորդ խօսքը դառնում է բողոք, ակրեսիա:

Այգին պէտք է մնայ այգի: Այգում մէկ սմ կանաչ տարածքի փոխարէն անգամ յոյժ կարելոր ինչ-որ բան կառուցել չի կարելի: Քաղաքն ինքն իրենով արդէն իսկ առանձին մշակոյթ է, կենսոլորտ, որն օժտուած է ուրոյն էներկետիկայով:

Որքան քաղաքում բնութիւնն է իշխում, որքան գերիշխում է բնական ծառերի կանաչը, որքան խնամուած են ծաղկանոցները, այնքան քաղաքի էներկետիկան դրական է, որքան շատ է պեթոնը, սուր անկիւնները, շէնքերի սրութիւնը, որոնք Հիւսիսային պողոտայում դանակի շեղբերի նման մխրձում են հոսող անցորդների անպաշտպան շարքերով, այնքան այդ մշակոյթը դառնում է անտանելի, դառնում է բացասական մարդու համար, եւ նրան մղում սկզբնական հայեացքից չպատճառարանուած ակրեսիայի:

Աստիճանաբար քաղաքը դառնում է առեւտրային մի տաղաւար, մի մեծ տօնավաճառ, որտեղ բնութիւնն օտարուած է:

Տարիներ առաջ քաղաքային տեսարանի էսքիզներ անելու համար կերպարուեստի բուհերի ուսանողներից շատերն իրենց օրն անց էին կացնում հենց Մաշտոցի այգում: Էսքիզներից շատերը լուսանկարչական ճշգրտութեամբ ֆիքսել են կանաչը: Այգու գոյնն այլեւս կրպակ կն է լինելու:



Հոգեւորի գեղջման մասին է խօսում այսօրուայ վիճակը: «Բուծիկները» միգրացե այսօրուայ Երեւանի էութեան մէջ աւելի են տեղաւորում, քան բնութիւնն ու ծառերը: Այն քաղաքում, ուր անգամ ատոմաէլեմենտների ճոխութիւնը հասել է աներեւակայելի մետաղամրցավազքի, «բուծիկները» պէտք է գրաւեն անգամ օփերային թատրոնի,

Փարաջանովի թանգարանի, կառավարութեան շէնքի տեղը... «Բուծիկներ»՝ ռոպոթների և մարդանման գոմպիների համար և յանուն...

Քաղաքայինը մշակոյթ է կերտում նաեւ արուեստի իմաստով: Քաղաքայինը մշակոյթ է, ու եթէ առեւտրականը չի գնահատում դա, մտաւորականը պէտք է տեսնի դա: Մտաւորականը պէտք է նայի ու տեսնի, եթէ միայն նա արքունի չէ:

Մտաւորականը մշտապէս եղել է, եթէ անգամ նրան զլխատել են, հասարակութեան շարժիչը: Պատերազմի ժամանակ զենք վերցրել, խաղաղ ժամանակ արարել կամ գնահատել ուրիշի արարածը....

Մաշտոցի պուրակի վերջին օրերի զարգացումներն անփոխարինելի լակմուսի թուղթ են մտաւորականին մտա-որականից տարբերելու համար: Նաեւ ժամանակ է, երբ ճիւղներն ի ցոյց են դնում իրենց իրական դէմքը՝ ծպտեալ ճիւղադրութիւնը, որ քողարկել էին մտաւորականի շղարշով: Լսեցի տեսակէտներ, որոնք ինձ ուղղակի ապշեցրեցին:

Լսեցի կարծիք, թէ դա այգի չէ, այլ կեղտի մէջ կորած տարածք: Ի դէպ, վայ ու շատ խո՛րը մտա-ւորականը այգու մասին անցեալ ժամանակով է խօսում՝ հաշիւները արդէն մաքրած համարելով այգու հետ, ինչպէս ժամանակին Մաշտոցի 7-ում գտնուող մէկ այլ կանաչ զանգուածի հետ... Կենտիկ կապ կայ, խո՛րը կապ... Կեղտի մէջ կորած տարածքը պէտք է վերացնել՝ ծառ տնկելով, այլ ոչ թէ էծանագին, հոտաւէտ «բուծիկներ» տեղադրելով եւ ընդմիջտ պեթոնով ծածկելով հողը:

Պարզում է, որ այդ կեղտն իրականում մարդկանց մէջ է բնակւում ու փթթում, դա նրանց հոգու կեղտն է, էութեան նեխուածքն ու զարշահոտութիւնը:

Արտագաղթը հասնում է մտքին, օտարացումն սկսւում՝ ներսում...

Երբ որ տեսնեմ, որ քաղաքը լրիւ անապատի է վերածւում, երբ կորցնեմ իմ Երեւանը, ստիպուած պէտք է այլ վայրում իմ Երեւանը փնտռեմ, որովհետեւ օրկանապէս շատ



հզօր ու խորը արմատով եմ կապուած Երեւանի հետ, եւ ինձ համար Երեւանի կորուստը մահուան նման բան է...

Երեւանից փշրանքներ են մնացել, բայց պատրաստ եմ անգամ այդ փշրանքներով բաւարարուել, որովհետեւ դրանք իմ Երեւանինն են, բայց այդ փշրանքն էլ կորցնելով՝ այլեւս կառչելու տեղ չի մնայ:

Հասարակութի՛ն, ամէն ինչ նախկին իր տե՛ղը ընկաւ: Խնճոյքն է մաղում հին պոռնկատան խոմփոցն իր հին,

Եւ զառանցելով, գազի լապտերը՝ կարմիր պատից կախ,

Իր չարագուշակ կրակն է ուղղում աղօտ լազուրին:

Ա. Ռեմպօ

Մայիս 1871թ.

Հեղինակներ՝ Վահէ Արսէն, Մարիամ Մուղղուսեան

ՀԵՏՔ

«Անին խորհրդանշում է հայ ճարտարապետական մտքի խրախճանքը». Սամուէլ Կարապետեան

«Անիով մենք կարող ենք ներկայանալ աշխարհին: Յատկանշական է, որ գոթական եկեղեցիների հիմք հանդիսացող յայտնի երկկեղբուն սլաքաձեւ կամարները, որոնք Եւրոպային յայտնի դարձան 13-14-րդ դարերէն յետոյ միայն, 11-րդ դարու սկզբին նման լուծումներով եկեղեցի կար Անիի մայր տաճարում», - Փետրուար 14-ին կայացած ասուլի ժամանակ յայտնեց Հայկական ճարտարապետութիւնն ուսումնասիրող հիմնադրամի նախագահ յուշարձանագէտ Սամուէլ Կարապետեանը:



Նա ներկայացուց Անին մայրաքաղաք հռչակելու 1050-ամեակին նուիրուած միջոցառումներու շրջանակէն ներս լոյս տեսած «Անի» պատկերազարդ եռալեզու ալպոմ-գիրքը: Այն ստեղծուել է 900 օրինակով, պատուիրատուն սփիւռքի նախարարութիւնն է: Գիրքը կ'ընդգրկէ եկեղեցիներու 660 մեծ մասամբ գունաւոր լուսանկարներ:



Կ'ականկալուի, որ անոր օրինակները հնարաւոր կ'ըլլայ գտնել նաեւ գրախանութներուն մէջ:

Սամուէլ Կարապետեանի համոզմամբ՝ գիրքը նաեւ գիտական է, քանի որ կ'ընդգրկէ մանրամասն չափագրութիւններ, որոնք Թորոս Թորամանեանը և այլ ճարտարապետներ չեն հասցուցած ներկայացնել, և առաջին անգամ կը ներկայացունին հանրութեան:

«Գրքում տեղ են գտել թուանշային վերակազմումներ, նաեւ՝ Անիի ամբողջական յատակագիծը (հեղինակ՝ Աշոտ Յակոբեան): Այստեղ յստակ ներկայացւում է Հովվի (Հովիվենց եկեղեցու) գտնուելու նախկին յստակ վայրը, սրա մասին տեղեկատուութիւն մինչ այսօր ոչ մի տեղ ներկայացուած չի եղել», - ընդգծեց յուշարձանագէտը:

Նա նաեւ յաւելեց, որ գրքի ամէն բաժին կը սկսի յատակագիծով, օրինակ՝ բնակելի և հասարակական կառոյցներու նկարագրութեամբ:

Անդրադառնալով այն հանգամանքին, որ Անիի մէջ տաճարները կառուցուել են այն ժամանակահատուածին, երբ մենք պետականութիւն ունէինք, և պետականութիւն ունենալու ներկայ պայմաններուն մէջ կառուցուող շինութիւններուն՝ յուշարձանագէտը նկատեց, որ Հայաստանի մէջ, մասնաւորապէս՝ Երեւանի մէջ, աշխոյժ կառուցապատման աշխատանքներ կ'ընթանան են, իսկ թե ճարտարապետական առումով որքանով են անոնք արդարացուած, քննարկման այլ թեմա է:

Աննա Բաբաջանեան

Գրական-Մշակութային

ՀԱՅ ԳԻՐՔԻ ԱՐԺԷՔՆ ՈՒ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

(Վերջին քանի մը տարիներու աւանդութեամբ, Կիպրահայ Թեմի Վարչական Ժողովը կը կազմակերպէ դասախօսական շարք մը, որ այս տարի նուիրուած է հայ գիրքին եւ տպագրութեան, համահունչ՝ Արամ Ա. Վեհափառ Հայրապետի տնօրինութեամբ եւ սրբատառ Կոնդակով, 2012 տարին ՀԱՅ ԳԻՐՔԻ ՏԱՐԻ հռչակումին: Դասախօսութիւնները կը կատարուին Մեծ Պահոց շրջանի Ուրբաթ օրերուն, Հսկումի արարողութեանց ընթացքին: Այս ծիրէն ներս է որ կայացաւ հետեւեալ դասախօսութիւնը, զոր կը յանձնենք մեր ընթերցողներու ազնիւ ուշադրութեան):



Ընթացիկ տարին 500-ամեակն է Հայ Գրատպութեան: Երեւանը, այս առիթով հռչակուած է Գիրքի համաշխարհային մայրաքաղաք՝ UNESCO-ի կողմէ: Արամ Ա. Վեհափառ Հայրապետը՝ սրբատառ կոնդակով, տարին հռչակած է Հայ Գիրքի տարի: Հանգամանքներ՝ որ կը պարտաւորեցնեն մեզ անգամ մը եւս իմաստաւորելու Հայ Գիր ու Գիրքի արժէքն ու կարեւորութիւնը հայ կեանքին մէջ:

Բոլոր ժամանակներու մեծագոյն Մատենին մէջ, կայ հետեւեալ դիպուկ ու թանձրախիտ տողը՝ «Ի սկզբանէ էր Բանն», այսինքն՝ Միտքը, որ արտայայտութիւն կը գտնէ խօսքին ու լեզուին մէջ: Արդարեւ, ասուն մարդը անասունէն զանազանող հիմնական տարրը խօսքն է...: Խօսքը, սակայն, կրնայ փոխանցուիլ սերունդէ-սերունդ, ապրիլ ու ապրեցնել, յաւերժանալ...եթէ չըլլայ գիրը, որով կրնայ ան դրոշմուիլ մագաղաթի թէ թուղթի վրայ կամ այլուր, դառնալով իմացական, հոգեմտաւոր ժառանգութիւն..., սերունդէ-սերունդ փոխանցուող յուշ ու յոյզ, խռովք ու ապրում, տեսիլք ու տեսլական, միտք ու գաղափար, շունչ ու ոգի, ապահովելով քաղաքակրթութեան զարգացման շարունակականութիւնը:

Մեր պարագային, ամենահայ ու ամենամեծ Ս. Մեսրոպ Մաշտոցն էր որ հրաշակերտեց Հայ Գիրերը, թոչնո՞ղ խօսքին ու հնչող լեզուին համար դարբնեց երկաթագիր 36 տառերը մեր, մշակութային յեղափոխութեան մը հիմքը դնելով...: Ան իրաւամբ դարձաւ «Հայ Դարերուն դիմաց կեցող ադամանդեայ ապառաժ», ամրակոտ ու անխորտակելի:

Հայ գիրով ու գիրքով պատրաստուեցաւ հայ մարդը եւ աւելի հայացաւ: Բացուեցան դպրոցներ, դասեր աւանդուեցան, հայաբարբառ բեմեր դարձան մեր եկեղեցիներու խորանները, հայ ձեռագիր մատենաներու գրչագրութեան կեդրոններ դարձան մեր վանքերը...: Արդիւնքը եղաւ ազգափրկութեան ու ազգակերտումի այն հոյակապ գործը, որ ապահովեց մեր ժողովուրդի պատմական երթը: Հայ գիրն ու գիրքը հնարաւորեցին գերազանցօրէն հայ ազգային դաստիարակութիւնը, որ պայծառակերպեց հինգերորդ դարը, նոր աւին ու աւիշ ներարկեց հայ ինքնութեան, երբ մանաւանդ սպառնալիքի տակ էր հայոց ազգի եւ պետականութեան անվտանգութիւնը..., երբ Հայաստանը, այդ ժամանակ, մասնատուած էր պարսկական եւ բիւզանդական հատուածներու, երբ կորսուած էր մեր երկրին քաղաքական անկախութիւնը: Այսպէս, Մեսրոպեան գիրն ու գիրքը լեզուական-կրօնական-մշակութային անկախացում ընծայեցին Հայաստանի..., դարձան հայոց ազգային ինքնութեան ու միասնականութեան խորհրդանիշ, ազգային ինքնապաշտպանութեան էական տարր...:

Ազգային այդ ինքնութեան ոգիով դաստիարակուեցաւ Վարդանանց սերունդը, որ ի պաշտպանութիւն հայ ինքնութեան ու արժանապատուութեան, հայ հաւատքի ու հայրենեաց, գնաց ծայրագոյն զոհաբերութեան, արհամարհելով Տիգրանի փիղերը եւ Բիւզանդիոնի կայսերական հրապոյրները...:

Այնուհետեւ, դարեր շարունակ, մեր մատենագիրները՝ մութ խուցերու մենութեան մէջ, մոմի վտիտ լոյսին տակ, «մի կում ջուրով ու մի նշխար հացով» պատմութիւնը մեր գրեցին մագաղաթի վրայ տժգոյն..., որպէսզի մեր ժողովուրդը չգրկուէր իր հաւաքական յիշողութենէն, իր անցեալէն..., քաջ գիտակցելով, որ առանց իր անցեալի յիշողութեան, ժողովուրդ մը հաստատապէս չի կրնար կերտել իր ապագան եւ կը դատապարտուի ստոյգ կորստեան: Զուգահեռաբար, ստեղծուեցան կրօնա-փիլիսոփայական երկեր եւ հայ գեղարուեստական գրականութիւն, որոնք դարձան ճշմարիտ հայելին հայ մտքին ու հայ հոգիին...: Հարագատ արտացոլումը՝ հայ մարդուն աշխարհը ընկալելու եւ ապրելու ինքնատիպ կերպին, արտայայտութիւնը անոր իդէերուն եւ երագներուն, տագնապներուն ու տուայտանքներուն, իտեալներուն ու տեսլականին..., եւ որպէս սրբազան կտակ՝ յանձնուեցան գալիք սերունդներուն: Քանզի, ինչպէս կը գրէ մատենագիրը իր յիշատակարանին մէջ, «Զեռս գնայ, դառնայ ի հող, Գիրս մնայ յիշատակող»:



Հայ գիրն ու գիրքը, այսպէս, դարձան հայութիւնը ցոլացնող, հայութիւնը պահող ու կերտող հզօրագոյն ազդակներ: Ներշնչարան ազգային ոգիի ու գիտակցութեան, հաւաքական յիշողութիւն ու գալիքի տեսլական, ազգը միաւորող հաւաքական ինքնաճանաչում եւ արժանապատուութիւն: Ինքնատիպ մշակոյթի եւ քաղաքակրթութեան ձեւաւորման անգերազանցելի գործօն: Բայց, մանաւանդ, հայ գիրքը եղաւ հայոց Մեծաքանչ լեզուի, հայ Բառ ու Բանի անփոխարինելի գանձարան ու

շտեմարան, իսկ լեզուն միայն բառ ու տող չէ, այլեւ՝ միտք ու գաղափար, հոգեբանութիւն ու նկարագիր, պատմութիւն ու մտածողութիւն...:

Գրատպութեան գիտը Կիւթենպէրկի կողմէ՝ 1439-ին, որոշապէս նոր հնարաւորութիւններ կ'ընձեռէր գրական մշակոյթի զարգացման համար: 1512-ին՝ Յակոբ Մեղապարտ կը հրատարակէր առաջին հայերէն տպագիր գիրքը՝ «Ուրբաթագիրք»ը Վենետիկի մէջ, եւ սկիզբ կ'առնէր հայ գիրքի տպագրութեան հարուստ պատմութիւնը: Հայ գիրքը տակաւ կը գտնէր լայն տարածում ժողովրդային զանգուածներու մօտ, կը ժողովրդայնանար, ազգային ինքնագիտակցութեան եւ հայեցի ոգիի արթնացման նորոգ խթան հանդիսանալով՝ հայոց պետականութեան բացակայութեան պայմաններուն տակ: Այստեղ պետք է յիշատակել ի մասնաւորի Մխիթար Մեքաստացիի անունը, որուն հիմնաձ



Միաբանութիւնը յառաջ բերաւ հայ գրականութեան նոր վերածնունդ մը: 1717-ին՝ ան հաստատուեցաւ Ս. Ղազար կղզիին մէջ, բազմաթիւ գիրքեր տպել տուաւ Վենետիկ քաղաքին մէջ, գիրքերը Ամսթերտամէն բերել տալով: Իր աշակերտները, հետեւելով իր գծած ուղիին, հիմնեցին տպարան եւ դպրոցներ, նպատակ ունենալով նպաստել հայ լեզուի վերակենդանացումին, մտաւոր գործունէութեան ծաւալումին, ազգասէր եւ ազատախոհ սերունդի մը պատրաստութեան: Գրական-մտաւորական այս շարժումը պիտի անհանգստացներ նոյնինքն Սուլթան Ապտիւլ-Համիտը, որ պիտի խոստովանէր. « Հայ յեղափոխականներու բոլոր ռումբերը զիս այնքան չեն վախցներ, որքան Վենետիկի տպարանը»: Ահա՛ հայ գիրքին, հայ տիպ ու տառին ոյժը:

Արդարեւ, 19-րդ դարու հայ ազգային-ազատագրական շարժումները մեծ բան կը պարտին հայ գիրքով սերմանուած ազգային-հայրենասիրական գաղափարներուն ու ոգիին, որոնք խոր թմբիրէն արթնցուցին՝ օտարի դաժան բռնութեան տակ դարերով ստրկացած հայ հոգին...: Խաչատուր Աբովեանի «Վերք Հայաստանի»ն, Ռաֆֆիի վէպերը, Ծերենցի, Ալիշանի, Խրիմեան Հայրիկի, Միքայէլ Նալբանդեանի եւ այլոց գիրքերը դարձան ազատութեան կոչ ու հրաւեր հայրենեաց...ըմբոստութիւն սրբազան, ոգորում ու մաքառում յանուն ազգային կոխկոտուած արժանապատուութեան վերականգնումին...:

Նոյնը չպատահեցա՞ւ 1965-ի Ապրիլ 24-ի ազգային վերելքի նախօրէին, երբ մինչ այդ արգելափակուած արեւմտահայ յայտնի հեղինակներու՝ Մեծարենցի, Միամանթոյի, Վարուժանի, Ռուբէն Սեւակի եւ այլոց երկերու վերահրատարակութեամբը Խորհրդային Հայաստանի մէջ, ենթահողը պատրաստուեցաւ Եղեռնի 50-ամեակի գերագոյն վերելքին Երեւանի մէջ...: Իսկ կարելի է՞ երեւակայել 1988-ի ազգային ոգիի հրեղէն ժայթքումը, միլիոնաւոր հայ մարդկանց բռննջքաւորումը, եթէ չըլլային՝ Պարոյր Սեւակի, Համօ Սահեանի, Գեորգ Էմինի, Վահագն Դաւթեանի, Հրաչեայ Յովհաննիսեանի, Յովհաննէս Շիրազի, Սիլվա Կապուտիկեանի, Հրանդ Մաթեոսեանի, Մուշեղ Գալշոյեանի եւ այլոց ստեղծած գրականութեան ազգային-հայրենասիրական լիցքերը...:

Հայ մարդը ակնածանքով ու նուիրումով մօտեցած է հայ գիրքին...: Այդպէս էր երէկ, երբ Եղեռնի գեհենային օրերուն՝ երկու հայուհիներ, իրենց ինչքն ու իրեղէնը մէկդի՝ ձգած, նախընտրեցին փրկել կորուստէ Մշոյ վիթխարի ձեռագիր մատեանը՝ Ճառընտիրը եւ զայն երկուքի բաժնած հասցուցին Երեւան: Այդպէս էր, երբ անգաւակ ամուսիններ գիրք կը որդեգրէին, եւ երբ արժեքաւոր գիրքը իյնար թշնամիին ձեռքը, հայ մարդը ետ կը վերցնէր զայն ամենէն բարձր փրկագինը վճարելով յանուն անոր փրկութեան...: Եղեռնի սեւ օրերուն, երբ թուղթը պակսեցաւ, հայ մայրը անապատի աւազին վրայ դրոշմեց հայոց այբուբենը, զայն կտակելով իր զակին որպէս հայեցի գոյութեան վճռորոշ գրաւական: Եղեռնէն ետք ալ, հայ գիրքը կը դառնար գերագոյն գրաւականը մեր ազգային վերագարթօնքին...: Հայ բազմահազար որբեր, ցրուած աշխարհի երեսին, կը խլէին գիրքը «կատաղօրէ՛ն, հացի՛ պէս», որպէս հոգեմտաւոր հանապազօրեայ սնունդ, կարենալու համար ապրիլ որպէս հայ մարդ, արժանի ժառանգորդը ազգային դարաւոր մշակոյթին...:



Հայ գիրքի ճշմարիտ պաշտամունքը ունեցած, Երանաշնորհ Գարեգին Ա. Կաթողիկոս այնքան իմաստալից կերպով կը պատգամէ. « Գիրքը գիրքէն աւելի բան մըն է հայուն համար, մանաւանդ՝ Սփիւռքի անհող եւ անլաստ հայութեան համար: Հայրենիք է գիրքը: Վարդանանց բանակ են հայ տառերը: Խորենացիական պատգամ են հայ պատմախօս մատեանները: Երգի բարձրացած մեղեդիներ են Շնորհալեան տաղերը»:

Իսկ այսօր՝ Գիրքը ընդհանրապէս տագնապի մէջ է այսօր ամբողջ աշխարհի մէջ: Զգալիօրէն փոխուեր է գիրքի հանդէպ հանրութեան վերաբերմունքը, մասնաւորաբար համակարգչային դարաշրջանի խուժումովը մեր կեանքէն ներս: Կան որոշապէս այլ ազդակներ եւս, ինչպէս տեղեկութեանց եւ մշակոյթի կրաւորական ընդունումը ձայնասփիւռի, հեռատեսիլի եւ այլ միջոցներով, սպառողական հասարակութեան մը ստեղծած նիւթական եւ մակերեսային արժէքներու խօլ հետապնդումը: Տակաւ՝ զանգուածները անգրագէտ դառնալու վտանգին տակ են 21-րդ գերքաղաքակիրթ դարուն...: Իրավիճակը տարբեր չէ հայ իրականութեան մէջ, այլեւ առաւել ահագանգային, նկատի ունենալով մեր փոքր թիւը: Ակնյայտ իրողութիւն է արդէն հայոց լեզուի աղաւաղումն ու աղճատումը մեր օրերուն, որոնք որոշապէս արդիւնքն են ի մասնաւորի հայ մարդուն՝ հայ գիրքէն ու գիրքէն խորթացումին...: Զուգահեռաբար, տակաւ կ'աղօտի հայ հոգին, տխուր նահանջ կ'ապրին հայեցի ոգին ու ինքնագիտակցութիւնը:

Բաղդատական պատկերով մը, մինչ Սովետական Հայաստանի մէջ, ըստ հաւաստի աղբիւրներու վկայութեան, 1922-1970 ժամանակաշրջանին հրատարակուած են շուրջ 45,000 անուն գիրք եւ իւրաքանչիւր անուն գիրք լոյսին է ընծայուեր տասնեակ հազարաւոր տպաքանակով, այսօր՝ անկախացած Հայաստանի պայմաններու մէջ, գիրքերը լոյսին կ'ընծայուին մեծաւ մասամբ 500 տպաքանակով միայն եւ մեծ դժուարութեամբ կը սպառին անոնք: Միաժամանակ, գրադարաններ ու գրախանութներ կը փակուին, պատրուակելով թէ գիրքի պահանջարկ չկայ, իրենց տեղը զիջելով՝ շքեղ վաճառատուներու, խաղատուներու ու զարմանազան զբօսավայրերերու...: Ո՛վ դարք, ո՛վ բարք...: Սփիւռքի մէջ ալ, մինչ մէկ կողմէ՝ հրատարակչատուներ, խմբագիրներ ու գիրքի հեղինակներ, անչափ զոհողութիւններ յանձն առնելով, կը շարունակեն հայ գիրք ընծայել լոյսին, որպէս «Եղիցի Լոյս», միւս կողմէ՝ հայ մարդը կը զլանայ իր լուման տալ խրախուսելու համար հայ գիրքը, կամ զայն կը վերածէ լոկ գրադարանային զարդի...: Արդե՞օք պիտի վերածուինք սոսկ մակերեսային հաճոյքներով սնող ծանծաղամիտ ու անգրագէտ գոյութեան...:

Մեր մեծագոյն բանաստեղծներէն Աւետիք Իսահակեան դեռ անցեալ դարուն, խորաթափանց յայտնատեսութեամբ կը զգուշացներ. « Ես ձեզ ասում եմ՝ կը գայ ոգու սով, Ու դուք կը քաղցէք ճոխ սեղանի մօտ, Կ'ելնէք մուրալու յափրած որկորով, Հրեղէն խօսքի, վեհ խօսքի կարօտ»:

Կա՛յ սակայն աւելին: Լեզուն, գիրով դրոշմուած ու ամրագրուած եւ սերունդէ-սերունդ փոխանցուած, հիմնական առանցքն է մեր հայեցի ինքնութեան եւ ազգային



ինքնագիտակցութեան: Լեզուի կորուստով, մենք մեր իսկ ձեռքով տապանաբարը դրած կ'ըլլանք Հայ Դատի պահանջատիրութեան եւ իր վերջին հանգրուանին հասցուցած կ'ըլլանք Հայոց Ցեղասպանութիւնը..., այս անգամ Սպիտակ Եղեռնով, նոյնինքն մեր սեփական պատասխանատուութեամբ:

Ներկայիս, խոնարհաբար կը խորհիմ որ մեր գերագոյն խնդիրներէն մէկը պիտի ըլլայ՝ հայոց Բառը, Բանն ու Գիրը՝ որոնք, ինչպէս ըսուեցաւ, ազգային ինքնութեան ու ինքնագիտակցութեան, ինքնապաշտպանութեան ու դիմադրութեան մեր վճռորոշ հիմնատարքերն են, յարմարեցնել մշակութային գործունէութեան եւ հաղորդակցութեան ժամանակակից՝ Ելեկտրոնային միջավայրին, որպէսզի անոնք չկորսնցնեն իրենց ազգակերտումի եւ ազգապահպանման դերն ու նշանակութիւնը, որպէսզի հայոց մշակոյթը եւ հայ ազգը պահպանեն իրենց ինքնորոշութիւնը եւ զոհ չերթան՝ ազգ ու մշակոյթ համահարթեցնող ու ջնջող համաշխարհայնացման յորձանքին: Ժամանակակից աշխարհի մարտահրաւերները մեզմէ կը պահանջեն նոր մտածելակերպ ու նոր գործելաոճ... հայալեզու գրականութիւնն ու մշակոյթը խթանել եւ տարածել նաեւ Ելեկտրոնային միջավայրի մէջ, ստեղծել նաեւ թարգմանչական ծրագիրներ այդ միջավայրէն ներս...: Եւ այս բոլորը՝ հայ գիրքի տարածումին հետ զուգընթաց:

1600 տարի առաջ, Վռամշապուհ արքայի, Սահակ Պարթեւ կաթողիկոսի եւ Մեսրոպ Մաշտոցի առջեւ դրուած էր նոր լեզուաքաղաքականութիւն մշակելու գերխնդիրը: Նոյնն էր Յակոբ Մեղապարտի օրով, 500 տարի առաջ: Նոյնը չէ՞ այսօր եւս...:

Իսկ բոլորին գերագոյն նպատակը կը մնայ նոյնը այսօր եւ ընդմիշտ՝ պահել-պահպանել, զարգացնել եւ սերունդէ-սերունդ փոխանցել հայեցի էութեան հիմնատարքերը հանդիսացող՝ հայոց լեզուն, գիրն ու գրականութիւնը: Քանզի, ինչպէս կը պատուիրէր դարեր առաջ Տիգրան Մեծ իր զաւակին՝ Արտաւազդին՝ «Ամէն ինչ կարելի է կառուցել, վերագտնել բոլոր կորուստները, բայց եթէ կորսնցնես մայրենին, կը կորսնցնես ե՛ւ քեզ, ե՛ւ վարքը հայոց մեծաց, ե՛ւ Հայքը համայն, ե՛ւ ապագան մեր ասքանազեան ազգի»:

Երան Գույումճեան

Կանայք

/Խոհեր կանանց միամսեայ տօնի առթիւ/

Նրանց աչքերից լոյս է ճառագում,

Ծլարձակում է յոյսը գոյութեան,

Նրանց սրտերում աստղերն են ծաղկում,

Անձրեւ ու շողից հիւսուած ծիածան...



Կինը...նա տարբեր է այր մարդուց, բայց ոչ ստորադաս նրան: Կատարեալ կինը հաւասարագոր է կատարեալ տղամարդուն, սակայն կնոջ կատարելութիւնը պէտք է երեւայ իր կերպի մէջ, իր ձեւով, առանց նմանուելու այր մարդուն: Կնոջ գերագոյն կոչումը, նրա կեանքի իմաստն ու խորհուրդը ազգին զաւակներ պարգեւելն է: Այր ու կին տարբերում են ինչպէս ելեկտրականութեան դրական և բացասական լիցքերը, որոնք վերջնաարդիւնքում կազմում են մէկ միաձոյլ ամբողջութիւն:

Մարդաստեղծման օրից Ադամի մենակութիւնը փարատեց միայն կինը, դրախտն անգամ չկարողացաւ ցրել նրա հոգու թախիծը, միայն կինը ի գորտու եղաւ...Եւ միայն նրա ընկերակցութեամբ Ադամը դարձաւ ամբողջական: Բնութեան մէջ ամէն ինչ երկբեւեռ է, ու ամէն մէկը, իր չափն ու կշիռն ունենալով, ձգտում է դէպի իր լրացումը: Այր մարդու շնորհները նրա ուժն ու համարձակութիւնն են, նրա որոնող միտքը, բնատուր տաղանդը: Կնոջ բազում շնորհներից առանձնանում են նրա հմայքը և հրապոյրը: Կինը աստուածային ստեղծագործութեան խտացումն է. նրա գեղեցկութիւնը ներքին բարութեան և բոլոր առաքինութիւնների մէջ է.. Միայն այսպէս նա կը մնայ ներդաշնակօրէն գեղեցիկ:

Մի պահ համամարդկային կերպից տեղափոխուենք հայ իրականութիւն: Հայ կինը... նա արեւելքի և արեւմուտքի բարքերի խաչմերուկում անվերջ տարուբերում է՝ երբեմն վտանգելով հայուհու իր հրաշալի կերպը: Աւանդապաշտ, օճախապահական հայուհին՝ քրիստոնեայ, հեզաբարոյ, հաւատարիմ, իր գերդաստանի կարգ ու կանոնին հաստատ: Կարիքների ճիրաններում, արժէքների վայրվերումների լաբիրինթոսում խաթարուել է նաեւ հայ կնոջ կերպը: Ահա նա՝ այն մոլորուած հայուհին, որն իրեն կորցրել է հեռունքում գտնուող ամուսնու սպասման յոյսից...ու ստիպուած խրուել է ընտանիքի գոյատեւման խնդրի յորձանուտը: Բայց կայ նաեւ միւս հայուհու ընդգծուած կերպարը՝ կրթուած, զարգացած, սաւառնող մտքերով, մտաւորական հայ կինը՝ գիտնական, մանկավարժ, բժիշկ, արուեստագէտ, նախարար, գիւղապետ, ղեկավար հայ կինը, որն ուսել է տղամարդուն, իր ազգին՝ հայրենի երկիրը շէնացնելու գործում: Նա մոմի պէս այրում է նաեւ աշխարհային ցաւերից.. ու լիարժէքօրէն պատրաստ է միւս ազգերի կանանց հետ այրող փշերի միջով առաջնորդուել դէպի երկրային բարձունքներն ու համատեղ յաղթանակներ աւետել:

Այդ կինը յոգնել չունի, նա ստեղծագործ է, երագող, յաւերժի ուղեկցորդ է, նա լոյս է ճառագող, միտք է արարող, վեհօրէն բարձր է ու հպարտ: Այդ նրան է, որ հայ տղամարդը կարող է յիշաւի մատնացոյց անել:



Որքան էլ դժուարին լինեն կեանքի պայմանները, հենց նա է, որ աշխարհի կանանց կողքին կարող է փայլել... ու լոյս տալ, յաճախ նաեւ կուրացուցիչ լոյս... Նա ամենուր է՝ այստեղ՝ մեր քարաստան հայրենիքում, այնտեղ է՝ ովկիանոսից այն կողմ, ամեն տեղ նա ստեղծագործող է, շնորհալի... Իմ մոայլուող մտապատկերում երբեմն նրանց կողքին յայտնւում է արեւից ու տաժանակիր աշխատանքից մաշուած հողի աշխատաւոր հայ կինը: Մեծն Սեւակն է գրել. 'Բարկ արեւի տակ Բանում են գիւղի աշխատաւոր կանայք: Արեւն ուտում, այրում լափում է նրանց գեղեցկութիւնը, խմում մաշկի գոյնը':

Որքան անհաշտ եմ այն բոլոր կորուստներին, որոնք գուցէ կատարւում են ակամայ: Ես շատ եմ ուզում, որ հայ կնոջից չթալանուի նրա բնական հմայքը, պահպանուի նրա թովիչ աչքերի փայլը: Ու հեռու անցեալներին մնան նաեւ անխնայ տրորուած գեղեցկութիւններն ու ալպիական մանուշակները... Թող երբեք չխամրի աստուածատուր թովչանքը հայուհու, որ նա կարողանայ լոյս տալ... Նա կարող է, լսու՞մ էք, մարդի՞կ, նա արժանի է: Հայուհին հպարտօրէն յաղթանակած է դուրս եկել իրեն բաժին ընկած անպատմելի ու անպատկերացնելի իրավիճակներից: Թող միշտ գեղեցիկ ու երջանիկ լինեն կանայք: Որքան նրանք երջանիկ լինեն, տղամարդիկ աւելի ուժեղ կը դառնան: Կանայք սէր են, կանայք կեանք են, ծաղիկների նման են՝ բուրաւէտ, քնքուշ, գունեղ ու հիասքանչ ծաղիկների, որոնք միշտ խնամքի կարիք են զգում:

Կանայք բնութեան նման անկրկնելի են: Փայփայէ՞ք նրանց, այ՞ր մարդիկ, սիրէ՞ք ու խնայէ՞ք նրանց: Եւ թող կանայք տղամարդկանց հոգում առաջացնեն ոգեղէն վերելքի ցանկութիւն, մնան մշտապէս խելացի, գրաւիչ թէ՞ հոգով, թէ՞ արտաքինով: Ծովաչափ համբերութիւն ու անպարփակ, անեզր սէր... Տիեզերաչափ ՍԷՐ ձեզ, սիրելի՞ կանայք...

Կարինէ Մովսիսեան

Եղեգնաձոր

ՄՊԱՍՈՒՄ

Օրերն անցնում են, դառնում տարիներ անդարձ,

Ու կազմում են մեր կեանքի շղթան արծաթէ,

Դատարկ է այս աշխարհն իր մեծութեան մէջ.

Սպասման ցաւ է ու արցունքի հեղեղ...

Երկար շրջում եմ ծանօթ ծառուղու արահետով,



Ամենուրեք կարծես քո հոգուց մի մասնիկ կայ,

Ոչինչ չի փոխուել, ամեն ինչ առաջուայ պէս է,

Տանջալից լռութիւն է ու հոգու տագնապ:

Դու՝ այնտեղ՝ առանց ինձ,

Ես՝ այստեղ՝ քեզնից հեռու,

Ու պատռում է կարօտս լռութեան թանձր քողը,

Խենթութիւն է անհաս ու սառած համբոյր:

Ես սպասում եմ ՔԵԶ:

Կարինէ Մովսիսեան

Եղեգնաձոր

Գոհար Գասպարեան «Հայրենասիրութեան Անմար Ճրագ»

Խաչիկ Ճանոյեան, Լուս Անճելրս



Հինգ տարիներ առաջ մեզմէ առ յաւիտ բաժնուեցաւ Հայաստանի եւ հայ ժողովուրդի անթառամ փառքերէն, երգի (55) տարիներու վաստակով բազմամիլիոն հանդիսականներ հմայած, աշխարհի խոշորագոյն գրեթէ բոլոր սրահներուն մէջ ելոյթ ունեցած Գոհար Գասպարեանը:

Հայաստանի այս աննման սոխակը առաջին հայ երգչուհին էր, որ Նիւ Եորքի աշխարհահռչակ Քարնեկի Հոլին մէջ ելոյթ ունեցաւ, այդ ալ երբ Մոսկուա-Փարիզ-Նիւ Եորք թռիչքը, որ կը բերէր մեր երգչուհին, ուշանալով, երգչուհին ստիպուած էր այդ երկար ճամբորդութենէն ետք օդակայանէն ուղղակի սրահ երթալ, եւ կէս ժամ ուշացումով սրահ կը մտնէր: Մինչ երգահանդէսի կազմակերպիչները կը պատրաստուէին ներկայ հանդիսականներուն յայտնելու ձեռնարկին չեղեալ ըլլալը, յանկարծ Գոհար Գասպարեան բեմին վրայ յայտնուելով, իր երգով առաջին իսկ վայրկեանէն կը մագնիսացնէ բոլոր հանդիսականները եւ այդ վիճակին մէջ ալ կը պահէ զանոնք մինչեւ համերգին վերջին վայրկեանը:

Այդ օրերուն ամերիկեան եւ հայկական թերթերը մեծ գովասանքներով անդրադարձան՝ «Մինչ այժմ նմանը չտեսնուած-չլսուած հրաշք երգչուհին մասին», իսկ ամերիկահայութիւնը անսահման հպարտութեամբ լեցուեցաւ, կարդալով

գնահատանքի այդ գրութիւնները, իրենց ազգակից եւ արիւնակից Գոհար Գասպարեանի մասին: Միջանկեալ յիշենք, որ մեծանուն երգչուհին ծնած էր Եգիպտոս, (7 ամսուայ ծնունդ). նորածինը բամպակներով փաթթուած, տկար վիճակի մէջ տեսնելով, շատեր կը չարագուշակէն, որ այս փոքրիկը պիտի չապրի: Սակայն իր մշտեցի մեծ մայրը անոր մատներուն նայելով ըսած է. «Գոհարը պիտի ապրի եւ մեր ժողովուրդին պարծանք պիտի ըլլայ. տեսէք իր գեղեցիկ մատները, դաշնակ նուագող պիտի ըլլայ»:

Այդպէս ալ եղաւ, Գոհար Գասպարեան ապրեցաւ ոչ թէ դաշնակ նուագելով, այլ իր աստուածատուր երգի տաղանդով մեր ժողովուրդին պարծանք եղաւ. «Այնպէս որ Հայաստան անունը ասելիս, Գոհար Գասպարեանի անունը տալիս են օտարները», կ'ըսէր Փրոֆ. Գէորգ Խրլոբեան: Մեծանուն երգչուհին Ճափոնէն մինչեւ Արժանթին, Աւստրալիա, եւրոպական երկիրներ, Պարսկաստան, Թուրքիա, արաբական երկիրներ, Սովետական Միութեան բազմաթիւ սրահներուն մէջ մօտ չորս հազար ելոյթներ ունեցած է, որոնց մասին մօտ երեք հազար յօդուածներ եւ քննարկումներ եղած են: Նոյեմբեր-Դեկտեմբեր 1988-ին այս թանկագին երգչուհին Լոս Անճելըս եկաւ Հայաստանի Օփերայի խումբին հետ: Անհատական նախաձեռնութիւն մըն էր:

Ամերիկա նոր ժամանած հայրենակից մը, անփորձ, բայց բարի տրամադրութենէ մղուած, յանձն առած էր Հայաստանի Օփերայի խումբը հրաւիրել: Այդ օրերուն Գոհար Գասպարեան հեռատեսիլի կայանէն ուղիղ եթերով ելոյթ ունեցաւ: Ժողովուրդը հիացական ամենէն ջերմ եւ սրտաբուխ խօսքերով ողջունեց Գոհար Գասպարեանի ներկայութիւնը Լոս Անճելըսի մէջ: Սրտագեղուն խօսքեր եւ արտայայտութիւններ եղան հայ ժողովուրդի այս թանկագին զաւակին հասցէին:

Այդ օրերուն լոյսի եւ կազի պակասը ու մանաւանդ անգործութիւնը համատարած երեւոյթ էին Հայաստանի մէջ: Երբ հայրենակիցներէն մին հարց տուաւ. «Հայաստանի մէջ գործ չկայ, կազ չկայ, լոյս չկայ», մեծանուն երգչուհին խօսողը ընդմիջելով ամենայն համարձակութեամբ պատասխանեց. «Ի՞նչ ըսել է գործ չկայ. Հայաստանը անսովոր օրեր կ'ապրի՝ պատերազմ, անկախութիւն, երկրաշարժ, տնտեսական տագնապ, շրջափակում, ինչպէ՞ս կրնաք մեր երկիրը Արեւմուտքի հետ բաղդատել:



Ես այս տարիքիս, 55 տարուայ երգչուհի եմ, հիմա որ Օփերան փակ է, ես հագուստ կը կարեմ եւ օրապահիկս կ'ապահովեմ: Օփերան փակ մնալով ուրիշ գործ կ'ընեմ, ուրիշ գործ ընելը ամօթ չէ»: «Ես այս տարիքիս երբ կրնամ գործ ընել, մեր երիտասարդները պէտք է որ շարժին եւ գործ գտնեն: Ի՞նչ ըսել է գործ չկայ: Դուն գործ պիտի գտնես եւ ապրիս: Դժուարին օրերը ուշ կամ կանուխ պիտի անցնին, մենք պէտք է որ դիմանանք», աւելցուց հայրենի հողին եւ

ժողովուրդին անխզելիօրէն կապուած այս պատուական զաւակը:

Յատկանշական էր նաեւ տարբեր առիթով երգչուհիին պատասխանը լրագրողներուն, երբ հարց տուած են իրեն, թէ «ի՛նչն է որ Ձեզ ամենամեծ ուրախութիւն եւ գոհունակութիւն պատճառում է. Ձեր մասին եղած գրութիւնները, թագաւորներու, Շահնշահերու, նախագահներու պալատները, հանդիսականներուն ջերմ եւ խելացի ծափերը, թէ Ձեզ տրուած թանկագին նուէրներն ու վարձատրութիւնները...»:

Գոհար Գասպարեանի պատասխանը եղած է. «Իմ մեծագոյն ուրախութիւնս եղած է, արտասահմանեան ելոյթներէ ետք հայրենի տուն դառնալս. հոգեկան տարբեր զգացում կ'ունենամ երբ Հայաստան կ'ըլլամ», ըսած է Հայաստանի սոխակը: Հազար ու յաւերժ լոյս Հայաստանի այս հաւատարիմ գաւակին, որ ոչ միայն հաւատարմօրէն խարսխուած մնաց իր արմատներուն, այլ եւ հայրենասիրութեան անմար ճրագ հանդիսացաւ իր ողջ կեանքի ու գործի ընթացքին: Մեծն Գոհար Գասպարեան ոչ միայն հայ երգին ծառայեց եւ զայն սիրցուց ամբողջ աշխարհին, այլ հայրենասէր երգիչ-երգչուհիներու փաղանգ մը պատրաստեց մեր ազգին համար, որոնք Գոհար Գասպարեանի սիրով եւ հայրենասիրութեամբ լեցուն, հայ երգը կ'երգեն եւ կը տարածեն բովանդակ աշխարհով:

Ուրախ ենք որ Գոհար Գասպարեանի ոգին եւ հայրենասիրութիւնը նոյնքան զգալի են մեր այժմու նորահաս դասական կամ ժողովրդական երգիչներուն մօտ, որոնք ոչ միայն հայ երգ ու երաժշտութիւն կը կատարեն աշխարհի բոլոր ցամաքամասերուն վրայ, այլ մեր ողջ հայութիւնը անխզելիօրէն կը կապեն մեր յաւիտենական հայրենիքին եւ հայրենաբնակ ժողովուրդին:

Յաւել' թժ ապրին հայ երգը եւ մեր բոլոր տաղանդաւոր հայ երգիչները:

Բի'ւր յարգանք անմահն Գոհար Գասպարեանի յիշատակին:

Էջմիածնի պատմաազգագրական թանգարան. շփում հազարամեակների հետ

Էջմիածնի պատմաազգագրական թանգարանը գործում է 1964 թ.-ից: 2004 թ.-ին, երբ նախկին քաղաքապետներից մէկի՝ Հրաչիկ Աբգարեանի որոշմամբ վաճառուեց գործող թանգարանի շէնքը, չօգնեցին ոչ վարչապետին և ոչ էլ նախագահին ուղղուած դիմումները. թանգարանը միառժամանակ փակուեց:



2005 թ.-ին այն տեղափոխուեց մէկ այլ շէնք (քաղաքապետարանի հարեւանութեամբ) և գեներալ-լեյտենանտ Մանուէլ Գրիգորեանի հովանաւորութեամբ վերաբացուեց 2008 թ.-ի հոկտեմբերի 8-ին՝ Էջմիածին քաղաքի օրը:

Թանգարանը բաղկացած է 2 սրահներից. մեկը՝ պատմական, որտեղ ներկայացված են քարե դարից մինչև պրոնզե դարը ընկած ժամանակաշրջանի նմուշները, միսը՝ ազգագրական սրահ է: Թանգարանն այցելուներ շատ է ունենում:

Դրա պատճառներից մեկն այն է, որ Հայաստանում եղած 2 անվճար թանգարաններից մեկն է (միսը՝ Ցեղասպանության թանգարանն է): Քարե դարի ցուցանմուշների մեջ կարելի է տեսնել նախնադարեան մարդու կացարանի մաքերը՝ 2 անգամ փոքրացված, վանակատից աշխատանքային գործիքներ, կայծքարեր և այլն: Վերջիններս յայտնաբերվել են 2 տարի առաջ Ակնալիճ գիւղում: «Այս և նմանատիպ այլ նմուշներն հաւաստում են, որ Արարատեան հարթավայրը հանդիսացել է վաղ երկրագործական-անասնապահական մշակոյթի կարեւորագոյն կենտրոններից մեկը,- նշում է թանգարանի գիտաշխատող, հնագէտ Անժելա Թադևոսեանը:-Ուսումնասիրութիւններից պարզ է դառնում, որ նեոլիթեան ժամանակաշրջանում մարդիկ բնութեան միջոցների իւրացումից անցնում են արտադրող տնտեսութեան: Այստեղ կարելի է տեսնել ամենահին երկաթից պատրաստուած թելնոցը, որը յայտնաբերուել է Թեղուտի տարածքից»:



Ուշագրաւ նմուշներ կան նաեւ պրոնզե դարը ներկայացնող հատուածում: Դրանցից է, օրինակ, Հոփսիմէ եկեղեցու տարածքից յայտնաբերուած 17-ամեայ աղջկայ դամբարանը, Վանի թագաւորութեան շրջանի սափորը, Էջմիածնի տներից մեկի հիմքում յայտնաբերուած դէմքը, որն օգտագործուել է եկեղեցիներում 5-7-րդ դարերում: Պատմական

հատուածում ներկայացուած նիւթերի հիմնական մասը պեղուել է 1960-ական թուականներից մինչև 1980-ական թուականների սկիզբ:

Բայց պեղման աշխատանքները շարունակուում են մինչ օրս. ամռանը կը ցուցադրուեն Աղանատնից պեղուած նմուշները: «Շատ զարմանալի նիւթեր ենք գտել այնտեղից,- ասում է Ա. Թադևոսեանը,- Էնտեղ մի դամբարան կար, բացեցինք՝ ձիու դամբարան էր. մի ձի՝ թաղուած հսկայական դամբարանում»:

Նրա խօսքերով՝ Արմաւիրի մարզն ընդհանրապէս հարուստ է պատմական նիւթերով. այդպիսի տարածքներից են Ծաղկալանջը, Ակնաշէնը, Առատաշէնը, Աղանատունը, Ակնալիճը: Պեղումների ժամանակ շատ են լինում հետաքրքիր պատմութիւններ: Դանցից մեկն է յիշում Ա. Թադևոսեանը. «Լեռնային Ղարաբաղի Զանգեւանի շրջանի Կերեն գիւղն էր. ես բացեցի մի թաղում. այնտեղ ձեռքն էր, իսկ ձեռքի վրայ զարդերն էին՝ թելնոց և մատանիներ»:

Այս ցուցանմուշը յանձնուել է Հայաստանի պատմութեան թանգարանին, որտեղ և շուտով կը ցուցադրուի: Պատմական հատուածում իր ուրոյն տեղն է զբաղեցնում

մեր մայրցամաքում իր տեսակի մէջ նախադէպը չունեցող արջի արձանիկը, (քարի դար 4 հազարամեակ):



«Ոչ Ասիայում, ոչ Եւրոպայում չկայ նմանատիպ ժամանակաշրջանի էսպիսի արձանիկ», - ասում է Թադեւոսեանը, - անգամ՝ Հայաստանի պատմութեան թանգարանում»: Արձանիկը յայտնաբերուել է Թեղուտի տարածքում և ունի 7-8 հազար տարուայ կենսագրութիւն: Մօտաւորապէս այդքան տարի առաջ

էլ ձեռքով մշակել և նետաալաքներ են պատրաստել օպսիտիան քարերից. այժմ այդ քարերը մշակում են բացառապէս լազերի օգնութեամբ: Գեղեցիկ տիգայներական լուծումները հնարաւորինս պատկերաւոր ներկայացնում են թանգարանի 2-րդ սրահի ազգագրական նմուշները: Այստեղ կարելի է տեսնել թոնրատունը, որտեղ լաւաշ էին թխում մեր տատերը, խնոցին, որտեղ հարւում էր սարերի անուշահամ մածոնը, տան սենեակի մի հատուած՝ իր գորգերով ու կահ-կարասիով, դազգահ, գոռ, սպասք... Ըստ Անժելա Թադեւոսեանի՝ դպրոցահասակ պատանիները շատ են զարմանում՝ տեսնելով այժմեան և անցեալի կենցաղային պայմանները. «Իրենք չեն էլ պատկերացրել, որ այդ ժամանակ լոյս չի եղել, գազ չի եղել, ինտերնետ չի եղել...»:

Ազգային նմուշների մէջ իրենց յատուկ տեղն են զբաղեցնում հին գորգերը: Այժմ էլ որոշ մարդկանց տներում կան արժէքաւոր գորգեր, բայց նրանք նախընտրում են վաճառել դրանք, թէկուզ չնչին գումարով: Այստեղ է գտնուում նաեւ Էջմիածնի առաջին տպագրական մեքենան: 1894 թ.-ին Մեծ Բրիտանիայի թագուհին այն նուիրել է Խրիմեան Հայրիկին: Իսկ արդէն 1970-ական թուականների վերջում մեքենան նուիրուել է թանգարանին: Դրանով տպել են գրքեր և թերթեր՝ հոգեւոր թեմաներով: Բոլոր նմուշները զգուշութեամբ խնամւում և ժամանակ առ ժամանակ վերանորոգւում են: Ու թէկուզ թանգարանում տեսածը մի չնչին հուլունք, մի մետաղ լինի, բայց կարելորն այն է, որ հենց այդ պահին շփւում ես հազարամեակներ անցած նիւթի, քո տատերի ու պապերի պատմութեան հետ:

Հ.Գ. Քաղաքապետարանի ենթակայութեան տակ գտնուող թանգարանի նախկին տարածքում այժմ հագուստի և խաղալիքների խանութներ են:

Տաթև Խաչատրեան

ԵՊՀ Ժուռնալիստիկայի ֆակուլտետ, 4-րդ կուրս

Տեսակէտ

Մենք Ենք՝ Մեր Ցաւերը

Կեցցէ՛ Մարաջախտ Բաղրամեանը, Անկցի՞... Բաղրամեանը

Պարոյր Աղապաշեան, Պէյրութ, Լիբանան

Խորագիրը տարօրինակ չթուի:

Անիկա խօսուն իրականութեան մը տխուր պատմութիւնն է, որ, դժբախտաբար, կը կրկնուի ու կը կրկնուի, յատկապէս Հայաստանի մէջ, ուր խայտաբղէտ պատկերներ կը պարզուին, անսովոր իրավիճակներ կը ստեղծուին, չափազանցուած դերակատարութիւններ կը կատարուին:



Հարցը, աւելի ճիշդ՝ մտահոգութիւնը, կը վերաբերի հայրենի պատկան իշխանութիւններուն «սանձարձակ» տուչութիւններ, պարզեւատրումներ ու շքադրութիւններ տնօրինելու հիւանդագին անհեթեթութեան մասին է, որ յաճախ կը կատարուի անտեղի, անիմաստ եւ անխոհեմ կարգադրութիւններով:

Մենք այս «թունաւոր» թղթածրարին բազմաթիւ անգամներ անդրադարձած ենք վաղու ւց, թերեւս ըլլալով առաջիններէն, շեշտելով թէ՛ գնահատանքի եւ արժեւորումի տնօրինումները չեն կրնար ըլլալ չափանիշներու խախտումով ու մակարդակներու անկումով, ուր անհատական կապերը, հաշուենկատ մօտեցումները, պարագայական լսումները, «խաթըր»ական միջնորդութիւնները կը մնան... Ի պատուի: Վերջին հաշուով, ի՞նչ սկզբունքներով ու հիմունքներով, արժեչափերով եւ որակաւորումներով, կը մեծարուին կամ կը գնահատուին մարդիկ, եթէ ոչ իրենց ունեցած բացառիկ արժանիքներով, բերած ինքնատիպ նպաստներով, մատուցած մեծղի ներդրումներով, ինչ մարզի կամ կալուածի մէջ ծառայած ըլլան անոնք:

Սակայն, անցնող շուրջ տասնհինգ տարիներուն, բայց, մանաւանդ վերջին հնգամեակին, ականատես եւ ականջալուր եղանք խելակորոյս ու հիւանդագին բեմականացումներու, ուր շքանշանները, պարգեւները, յուշամետալները, եւայլն, զիրար կը հրմշտկեն աննախընթաց արտօրանքով, թէ՛ որուն՝ ի՞նչ պիտի հասնի, որուն՝ ի՞նչ պիտի յանձնուի, որուն՝ ի՞նչ պիտի տրամադրուի, ահաւոր դերաբաշխումով մը, ուր «տէրն ու ծառան» կամ «ծառան ու տէր»ը զիրար չեն ճանչնար (թերեւս ալ... կը ճանչնան): «Պատուահաճոյութեան» այս կրկեսահանդէսին տխրահռչակ հիմնադիրը եղաւ Պրն. Ռոպերթ Քոչարեան, որ առանց գիտնալու «արժեւորութիւնի եւ արժեւորում»ի նրբութիւնները, գրպանները լեցուցած էր... շքանշաններով, զանոնք բաշխելով աստ ու անդ, ընդ որուն՝ Սփիւռք,



վարկաբեկելով այդ շքանշաններու անուանակիրները եւ պարգևատրուողները, կարծելով թէ մե՛նձ նուաճումներ կ'արձանագրէ ու համակիրներ կը շահի:

Օրի՛ն, ուժգնօրէն հակազդեցինք շարունակուող այս խեղկատակութեան, սակայն, ի գո՛ւր, Քոչարեան գրպանները աւելի լեցուց ու տեսակաւորեց շքանշանները, մինչ, հայ մտաւորականութեան մեծամասնութիւնը, աններելիօրէ՛ն, համակերպեցաւ քոչարեանական այս անուանարկային գործունէութեան, հնարք մը չգտնելով զսպելու հայ ժողովուրդի մեծերուն յիշատակն ու դերը արատաւորները, ընդ հովանեաւ Քոչարեանի մը: Բնական է, պարգևատրուողներուն մէջ կային (ու կան) արժանաւորներ, սակայն, հարցը այն էր որ զայն «Բաշխող» կողմը հեռու էր լուրջ ու գիտակից ըլլալէ, իսկ իր շուրջ գտնուողներուն մեծ մասը՝ պարզապէս պատեհապաշտ էր: Այսօր, ներկայ իշխանութեան օրօք, բան մը փոխուա՞ծ է: Ոչի՛նչ: Աւելի քան խայտառակ վիճակ մը կը տիրէ: Եթէ նախորդ շրջանին միայն նախագահական ծիրին մէջ կը մնար այս անկումային վիճակը, այսօր, տարածուած է բազմաթիւ ոլորտներէ ներս, ուր վարչապետականը, նախարարականը, եկեղեցականը, ակադեմականը, գրականը, եւայլն, եկած են միանալու «խժալուր համանուագ»ին:

Հետզհետէ այն անշեղ տպաւորութիւնը սկսած է ձեւաւորուիլ, որ հայ ժողովուրդի զաւակները, երկու հատուածներով, պիտի արժանանան հայրենի իշխանութիւններու... գնահատանքի վկայականներուն ու պատիւներուն, որովհետեւ, իւրաքանչիւր նախարարութիւն ու հիմնարկ՝ «մրցում»ի ելած է, ինքզինք պարտադրելու: Լա՛ւ է այս ամէնը: Լա՛ւ է, եթէ այդ տուչութիւններուն տրուի իրա՛ւ չափանիշներու յարգելիութիւն եւ ուղղութիւն, իսկ զանոնք կրողները ըլլան իրա՛ւ արժանաւորներ:

Լաւ չէ՛, եթէ այդ արարողութիւնները կ'ըլլան ցուցադրային ու ծրագրային հաշիւներով, իսկ զանոնք կրողները, մեղմ ըսած, անարժաններ: Արագ յետադարձ հայեացք մը, ցոյց կու տայ այս մատնանշումներուն... մերկութիւնը: Անգամի մը համար, թող յայտարարուի շարքը այն պարգևներուն, որոնք Հայաստանէն «արձակուեցան» դէպի Սփիւռք, մերթ ալեկոծելով, մերթ գինովցիներով ամբոխներ:



Սփիւռքի ազգային գործիչները, իրենց զանազան հանգամանքներով, անսակարկ զոհողութիւններով ծառայած են իրենց հայագաղութներուն ու հայահամայնքներուն, առանց ակնկալելու «պատուանշաններ», որոնք այլապէս ալ կրնան փայփայելի եւ օրինակելի ըլլալ ոմանց: Սակայն, այն ինչ որ տեղի կ'ունենայ ներկայիս «ցունամի»ի ոճով, առնուազն անհանդուրժելի է, իր բովանդակութեամբ ու տրամաբանութեամբ, երբ բարոյական ու նուիրական խոցելիութիւններ կ'առաջանան, տխուր հետեւանքներով:

Կ'ըսուի թէ՛ Սփիւռքի այս կամ այն հատուածին

պնդումները կը պատճառեն այս սայթաքումները, այս կամ այն կողմին հետապնդումին արդիւնքն է այս «առատութիւն»ը, այս կամ այն «հեղինակութեան» պարտադրանքին գոհացում տալն է: Չենք զարմանար: Բայց, ինքզինք յարգող իշխանութիւն, պետականութեան մեկնարկով, իրաւունք ունի՝ դառնալու ենթակայական ու կամայական, վնասելով իր հեղինակութեան աւանդական ու բարոյական արժէքներուն: Մենք դէմ չենք հայրենի պատկան իշխանութիւններուն Սփիւռքի գործիչները գնահատելու ու զանոնք վարձատրելու նախաձեռնութեան, զանազան արտայայտամիջոցներով, բայց, ո՞վ կ'ընդունի այն «բաբելոն»ութիւնը, որ այսօր կը տիրէ այդ հորիզոնականին վրայ: Մարաջախտ Յովհաննէս Բաղրամեան Տեղ մը պէտք է զգաստանալ եւ՝ արգելակել այս թաւալքը, վերականգնելով չափանիշներու կարգը, վերահաստատելով աւանդոյթը, վերարժեւորելով մեծարուողը, վերագտնելով հաւասարակշռութիւնը, առանց ստրուկը դառնալու «արտաքին» միջամտութիւններուն, ոչ ալ իյնալու «խնամի»ական թակարդներու մէջ: Իսկ նման «պատիւ»ներու մուրացկաններու ընչաքաղցութեան պէտք է վե՛րջ տրուի, նոյնիսկ հայրենի իշխանութիւններու կողմէ, եթէ կ'ուզուի պահել ազգային-պետական արժանապատուութիւնը:

Անուանի հայազգի զինուորական՝ մարաջախտ Յովհաննէս Բաղրամեանի ստացած շքանշաններու թիւը իր մարմնէն աւելի ծանր էր, որովհետեւ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԵԾՈՒԹԻՒՆ էր, հետեւաբար հայրենի իշխանութիւնները կրնա՞ն այդ մակարդակը օրինակել, երբ շքանշան «կ'աճեն», այլապէս ի՞նչ իմաստ ունի «կեցցե՛ք» ըսել, երբ հոն կայ... «անկցի»ն:

Մերձաւոր Արեւելքի մէջ, յուզումները կը տկարացնեն Հայաստանի տարածաշրջանային դիրքերը

Արեւմուտքը, ի դէմս ԱՄՆ-ի, Ֆրանսայի եւ այլ երկիրներու, ետ է քաշուեր Մերձաւոր Արեւելքի քրիստոնէական փոքրամասնութիւններէն, անոնց թուին՝ հայերէն: Այս մասին NEWS.am-ին յայտնեւ է Ռուսաստանի ԳԱ Արեւելագիտութեան ինստիտուտի Կովկասի եւ Կեդրոնական Ասիայի հարցերով կեդրոնի փորձագէտ Անտրէյ Արեշելը:



Իր խօսքով՝ մերձաւոր արեւելեան պետութիւններուն մօտ, արեւմտեան երկիրներու կողմէ հովանաւորուող յուզումները կը յանգեցնեն արմատական իսլամիստներու իշխանութեան գալուն, որոնց հետ ապրիլը քրիստոնէաներու համար դժուար պիտի ըլլայ: «Ֆրանսայի Սենաթն օրէնք ընդունեց ցեղասպանութիւններու, անոնց թուին՝ Հայոց ցեղասպանութեան մերժումը քրէօրէն պատժելու համար: Սակայն յետոյ

Սահմանադրական խորհուրդը զայն հակասահմանադրական ճանչցաւ:

Երբ օրէնքն ընդունուեցաւ Սենաթին կողմէ, Հայաստանի մէջ ֆրանսամետ հրավառութիւն կը տիրէր: Սակայն պէտք է մտածել, թէ ինչի՞ կրնայ յանգեցնել նոյն Ֆրանսայի գործունէութիւնը Մերձատր Արեւելքի մէջ», - նկատեր է քաղաքագետը:

Անոր խօսքով՝ Արեւմուտքը, ընդհանուր առմամբ, եւ Ֆրանսան՝ մասնաւորապէս, կ'ապակայունացնեն իրավիճակը Մերձատր Արեւելքի մէջ, ինչ որ կրնայ յանգեցնել քրիստոնէաներու, անոնց թուին՝ հայերու դուրս մղմանը տարածաշրջանէն:

«Միաժամանակ՝ քրիստոնէական փոքրամասնութիւնը շատ կարեւոր դեր կը խաղայ ուժերու հաւասարակշռութեան եւ կայունութեան աջակցութեան հարցով: Սուրիոյ եւ Լիբանանի մէջ, հայ համայնքը, մասնաւորապէս, շատ նշանակալից է Հայաստանի անվտանգութեան ապահովման տեսակէտէն՝ ամրապնդելով անոր տարածաշրջանային դիրքերը: Իր գործունէութեամբ, Ֆրանսան կը խաթարէ կայունութիւնը այդ երկիրներուն մէջ՝ ետ դառնալով եւ զանոնք թողնելով սիննի արմատականներու քմահաճոյքին: Դժուար չէ պատկերացնել, որ ատիկա կրնայ յանգեցնել Մերձատր Արեւելքէն քրիստոնէաներու դուրս մղմանը», - ըսեր է Արեւելք:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Վերջին 15 տարուայ ընթացքին Երեւանը «սպանուեց».

Կարինէ Դանիէլեան

Վերջին 15 տարուայ ընթացքին, Երեւանը «սպանուեց»: Փետրուար 21-ին լրագրողներու հետ հանդիպման ատեն ըսաւ բնապահպան Կարինէ Դանիէլեանը՝ խօսելով քաղաքի բնապահպանական խնդիրներու և Մաշտոցի պուրակի շուրջ յառաջացած բողոքի մեծ ալիքի մասին:



Ան նշեց, որ ուսումնասիրեր է Երեւանի բոլոր ցուցանիշները և եկեր է այն եզրակացութեան, որ վերջին 15 տարուայ ընթացքին, Երեւանը բնապահպանական և մշակութային առումով սպանուեցաւ: Ըստ իրեն՝ Մաշտոցի պուրակին մէջ իրականացուող ապօրինի շինարարութիւնը մի մեծ խնդրի փոքրիկ մասնիկն է:

«Բակերում պատերազմ է գնում: Մենք ի վերջոյ պէտք է հասկանանք, թէ որն է հանրային շահը: Նախկինում Հիւսիսային պողոտայում ապրող մարդիկ անօթեւան մնացին, իսկ այլ երկրներում գովազդում են այդ տարածքների բնակարանները: Այսօր խնդիր է նաեւ քաղաքի խտացումը: Լաւ է, որ Արմավեան փողոցում հանուել են

կրպակները, իսկ այսօրուայ տեղն ընդունելի չէ: Առաջինը՝ դա կանաչ տարածք է, երկրորդը՝ տարածքի երկու կողմերում հիւանդանոց է, ընդ որում, մէկը՝ ծննդատուն:

Մաշտոցի պուրակում շինարարութիւնը քաղաքի շահերից չի բխում», - նկատեց բնապահպանը: Կ. Դանիէլեանը տեղեկացուց, որ այս հարցով հանդիպեր է նաեւ քաղաքապետին հետ ու կը հասկնայ և՛ զինք, և՛ երիտասարդները: Ըստ իրեն՝ այս հարցով, քաղաքապետը իր շրջապատի մարդկանց հետ խնդիր ունի, որովհետեւ տեսեր է անոր աշխատանքը Աւանի մէջ: Համատեղ ասուլիսի ընթացքին, ճարտարապետ Լեւոն Իգիթեանը չհամաձայնեցաւ Կարինէ Դանիէլեանի ներկայացուցած փաստարկներուն:

Ան ըսաւ, որ Երեւանի քաղաքաշինական արժէքը Թամանեանի նախագծած կեդրոնն է միայն, մնացած բոլորը արուեստի տեսակէտէն արժէք չեն ներկայացներ: Անդրադառնալով Աբովեան փողոցի պատմութեան, ուրկէ հանուեցան կրպակները, ճարտարապետը ըսաւ. «Անկախութիւնից յետոյ մեր կենտրոնական փողոցներն ի՞նչ վիճակում էին՝ առետուր էին վարում այդ փողոցներում: Դա սարսափելի էր, եկաւ մի գեղեցիկ օր, և դրանք վերացան, առաջացան կրպակներ, պակասելը չէ՞ք նկատում: Վաղը դրանք նոյնպէս չեն լինի: Մաշտոցի պուրակում իրականացուելու է «Հին Երեւան» նախագիծը, իսկ կրպակները ժամանակաւոր են»: Լ. Իգիթեանի կարծիքով՝ ատոնք երկու տարիէն չեն ըլլար այդտեղ: Յիշեցնենք, որ արդէն մի քանի շաբաթ է, որ Մաշտոցի պուրակին մէջ տեղադրուող կրպակներու դէմ, բնապահպան ակտիւիստները նստացոյց կը կազմակերպեն՝ պահանջելով դադրեցնել շինարարութիւնը:

ՀԱՅԱՍՏԱՆ | ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ

Միմեանց ոչնչացնելու աւանդոյթը

Ինչպէս և սպասում էր, Ռոպերթ Քոչարեանը խախտեց լռութիւնն ու պատասխանեց Լեւոն Տէր-Պետրոսեանին, ով նրան Մարտի 1-ի հանրահաւաքում «խորտակուած նաւ» էր անուանել:



Քոչարեանն, իհարկէ, պատասխանեց իր գրասենեակի ղեկավարի շուրթերով: Վիքթոր Սողոմոնեանը «Մետիամարս»ի միջոցով յայտարարել էր, որ ոչ թէ Քոչարեանը, այլ Տէր-Պետրոսեանն է անընդհատ խորտակուողը:

Առաջին և երկրորդ նախագահների այս յաւերժական բանավեճը, մեղմ ասած,



լաւագոյն վկայութիւնն է այն բանի, թէ ընդհանրապէս ինչի վրայ է ծախսուել անկախութեան ժամանակը երկու տասնամեակ շարունակ: Այդ ժամանակը՝ ծախսուել է ոչնչի վրայ, որովհետեւ եթէ այն ինչ-որ բանի վրայ ծախսուած լինէր՝ ինչ-որ արժեքաւոր բանի վրայ, ապա այսօր մեր հասարակական-քաղաքական կեանքում առաջին և երկրորդ նախագահները ոչ թէ կը զբաղուէին միմեանց վրայ ցեխ շալտելով և միմեանց որակումներ տալով, այլ պարզապէս կը վայելէին յետնախագահական հանգիստն ու ընդամենն իրենց խորհուրդներով, այսպէս ասած, փորձագիտական միջամտութիւններով ուղենիշեր կը սահմանէին հասարակութեան և քաղաքական ուժերի համար: Բայց, Հայաստանում իրավիճակն ուրիշ է, և այսօր առաջին և երկրորդ նախագահները միմեանց որակում են ամենակոպիտ և վիրաւորական թոններով, իսկ երբեմն-երբեմն էլ նրանց է միանում երրորդ նախագահը, կամ նրանք են երբեմն իրենց միացնում երրորդ նախագահին:

Հենց այսպէս էլ ապրում ենք՝ մեր կառուցած երկրում, կամ նրանց՝ այդ երեք նախագահների կառուցած երկրում, որտեղ աւելի ու աւելի շատ է ակնյայտ դառնում, որ երկրի զարգացման ճանապարհին կանգնելու միակ տարբերակն այն է, որ այդ ճանապարհով դուրս բերուի երեք նախագահների «եռանկիւնի» կոչուածն, ու վերջապէս հասարակական-քաղաքական կեանքն ու միտքը կարողանան շնչել, կարողանան տեսադաշտ ունենալ և նայել մի փոքր աւելի հեռուն, քան երեք նախագահները: Իսկ նրանք թող շարունակեն միմեանց որակումներ տալ, բնորոշել իրար որպէս նաւ, լաստանաւ, կամ միգուցէ՝ սուզանաւ, միայն թէ այդ ամենն անեն հասարակութեան աչքից հեռու:

Իրականում այս ամենն, իհարկէ, ցաւալի է: Ցաւալի է, որովհետեւ կան ազգեր, որ նոյնիսկ տասը տարուայ անկախութիւն կ'երազէին՝ պետական աւանդոյթներ հաստատելու և դրանք անշրջելի դարձնելու համար, իսկ մենք քսան տարուայ անկախութեան ընթացքում այդպէս էլ չկարողացանք պետական աւանդոյթներին անգամ մօտ ինչ-որ բան ստեղծել, փոխարէնը բաւական յաջող կերպով ներդրեցինք փոխադարձաբար միմեանց ոչնչացնելու աւանդոյթը:

Լուսանկարը՝ Գագիկ Շամշեանի

Վերլուծական || Մուսա Միքայէլեան

Անցուդարձ

ՊՈԼԻՍ ԹՐՔԱԿԱՆ ՄԵԾ ՑՈՅՑ ՊԱՐՄԱԻԵԼՈՒ ՀԱՄԱՐ «ԽՈՃԱԼՈՒԻ ԶԱՐԴԵՐ»Ը ԵՒ ԱՆԱՐԳԵԼՈՒ՝ ՀԱՅԵՐԸ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ ԹՈՒՐԹԻՈՅ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Ծանօթ է, որ քանի մը տարիէ ի վեր, Ազերպայճան՝ խեղաթիւրելու համար ճշմարտութիւնը եւ մշուշապատելու համար իրողութիւնները, հնարած է «Խոճալուի ջարդ»ի պատմութիւն մը, որ գտած է անմիջական զօրակից մըն ալ, յանձինս՝ Թուրքիոյ, որուն հացին իդ քսուած է, Հայոց Ցեղասպանութեան պնդումներուն դէմ հակաճառութեան բացառիկ ատաղձ գտած ըլլալու առումով:



Այսպէս, «Խոճալուի ջարդեր»ուն 20րդ տարելիցին առթիւ, «612 հոգիի կոտորումին դէմ» բողոքելու համար աւելի քան 15 հազար ցուցարարներ Փետրուար 26ին, քայլարշաւէ մը ետք համախմբուած են Պոլսոյ Թաքսիմ հրապարակին վրայ: «Բոլորդ հայ էք, բոլորդ պոռնկորդի էք», «Հրանդ Տինքին՝ պոռնկորդիները», «Հայր՝

մարդասպան», «Մի՛ լռէք ընդդէմ հայկական սուտին», «Հրանդին պոռնկորդիները չեն կրնար վիատեցնել մեզի» ու նման արտայայտութիւններ կրող ցուցատախտակներ պարզելով եւ լոզունգներ արձակելով ամբոխը կարճ քայլարշաւ մը կատարած է, անցնելով ֆրանսական հիւպատոսարանին առջեւէն, որ յատուկ հսկողութեան տակ առնուած է:

Հսկողութեան խիստ միջոցներ առնուած են դէպի «Ակօս» թերթը առաջնորդող պողոտային վրայ ալ: Վանկարկուած են նաեւ «Գորշ գայլ Օկիւն», «Գորշ գայլ Չաթըլ» լոզունգները, իբրեւ փառաբանանք Օկիւն Սամասթին եւ Ապտուլլահ Չաթըլին, որոնցմէ առաջինը ծանօթ է որպէս Տինքի մարդասպանը, իսկ երկրորդը՝ ծայրայեղ ազգայնական անձնաւորութիւն մըն է, որ մահացած կամ սպաննուած է Սուսուրլուքի խորհրդաւոր արկածին: Ազգայնամոլ այս ցոյցին հակազդեցութիւն ցոյց տուած է նոյնիսկ Թուրքիոյ Ընկերվար Ազերպայճանցիներու Միութիւնը, որ քննադատած է ջարդին ազգայնական զգացումներով մօտենալու կեցուածքը: Ցոյցի ընթացքին մասնակիցները ցրած են զուգարանի «Սարքոզի» վաճառանիշով թուղթեր ալ՝ «Սարքոզի մաքրէ՛ աղտոտութիւնդ» լոզունգներու ընկերակցութեամբ:

Այսքանը կարդալէ ետք, բարի կամքի տէր, լաւատես ընթերցողը թերեւս յուսայ եւ մտածէ որ միջոցառումը խումբ մը ծայրայեղականներու նախաձեռնութիւնն է պարզապէս: Բայց, ո՛չ: Թուրքիոյ ներքին գործոց նախարարն ալ մասնակցած է ցոյցին ու ելոյթ ունեցած: Նախարար Իտրիս Նաիմ Շահին իր խօսքին մէջ ըսած է.

"Թուրք ժողովուրդը աշխարհի վրայ՝ խաղաղութեան, սիրոյ եւ մարդկային արժէքներու երաշխաւորն է. մարդկութեան դաս տուած ժողովուրդ է: ...Որպէս թուրք ժողովուրդ, ո՛չ Ղազախստանի, ո՛չ Ազերպայճանի, ո՛չ Թուրքիոյ, ո՛չ Պալքաններու մէջ, ո՛չ ալ աշխարհի որեւէ մէկ անկիւնը մարդկութեան ամօթ պատճառելիք պատմութիւն, անցեալ ունեցած ենք":

Նշելէ ետք, թէ թուրք ժողովուրդին սիրտը սիրով լեցուն է, նախարարը շարունակած է. "Թուրքը՝ ռազմաճակատին վրայ իր թշնամիին ջուր հրամցնելու վեհութեան տէր միակ զինուորն ու ժողովուրդն է: Թուրք ժողովուրդին սիրտը սիրով լեցուն է, բայց միաժամանակ, ի հարկին՝ ան գիտէ նաեւ միասնական ու մէկ բռունցք դառնալ:

Մեր հաւատքը, մշակոյթը, ճամբան, սերը մէկ են: Ազերպայճանի մէջ հոսած արիւնը մե՛ր արիւնն է: Այդ օր այդ արիւնը հոսած է, բայց դեռ հաշիւը չէ տեսնուած: Այնքան ատեն որ թուրք ժողովուրդը կ'ապրի, ատոր հաշիւը պիտի պահանջուի: Պոլսոյ կամ Պաքուի մէջ, կամ այլուր՝ աշխարհի որեւէ մէկ տեղը, բոլորս միասին հետեւորդը պիտի ըլլանք իրաւունքի եւ արդարութեան այդ դատին...":

Իտրիս Նաիմ Շահին եզրափակած է իր ելոյթը ըսելով՝ "Առաջ Աստուած, ժողովուրդէն ստացած ուժով եւ սիրով՝ մեր կառավարութեան եւ մեր վարչապետ Ռ.-Թ. Էրտողանի՝ Թուրքիոյ եւ արտաքին աշխարհին մէջ ցուցաբերած ղեկավարութեամբ ԻԱ. դարը պիտի ըլլայ Թուրքիոյ, թուրք ժողովուրդին եւ թրքական աշխարհին հարիւրամեակը...":

Ֆրանսայի նախագահը խոստացեր է նոր օրինագիծ ներկայացնել ընտրուելէն ետք

Ֆրանսայի նախագահ Նիքոլա Սարքոզին, Մարտի 7-ին հանդիպել է ֆրանսահայ կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն հետ:



Հանդիպման մասնակցեր են Ֆրանսայի մօտ Հայաստանի դեսպան Վիգէն Ճիտեճեանը, Փաթրիք Տեւեճեանը, ֆրանսահայ արտադրիչ Ալէն Թերզեանը, Շառլ Ագնաւուրի իմպրեսարիօ Լեոն Սայեանը եւ այլ անուանի անձինք: Սարքոզին հանդիպման ընթացքին վերահաստատել է իր յանձնառութիւնը՝ Հայոց Ցեղասպանութեան ժխտումը քրեականացնող նոր օրինագիծ

ներկայացնելու վերաբերեալ: Ան ընդգծել է, թէ օրինագիծը կը ներկայացնէ նախագահ ընտրուելէն յետոյ:

Նշենք, որ Ֆրանսայի Ազգային Ժողովի պատգամաւոր Վալերի Պուայէի ներկայացուցած օրինագիծին Ֆրանսայի Ազգային ժողովը հաւանութիւն էր տուեր 2011 թուականի Դեկտեմբեր 22-ին, Սենաթը՝ այս տարուայ Յունուար 23-ին: Ֆրանսացի խումբ մը ծերակոյտներ օրինագիծը վիճարկեր էին Սահմանադրական խորհուրդին մէջ, եւ խորհուրդը Փետրուար 28-ին հակասահմանադրական էր ճանաչեր ցեղասպանութիւններու ժխտումը քրեականացնող օրինագիծը Ատկէ ետք, Սարքոզին կարգադրեր է որ կառավարութիւնը նոր օրինագիծ պատրաստէ, այդուհանդերձ կառավարութիւնը յայտնէր է, որ այդ օրէնքը չի կրնար քննարկուիլ մինչեւ ընթացիկ խորհրդարանական նստաշրջանի վերջը, որ աւարտէր է արդէն, եւ հետեւաբար կը յետաձգուի մինչեւ Մայիսին եւ Յունիսին Ֆրանսայի մէջ կայանալիք նախագահական եւ խորհրդարանական ընտրութիւններէն ետք կայանալիք խորհրդարանական նիստերը:

«Հայաստանն ու Թուրքիան կրնան հասնիլ 1915-ի փաստերու ամբողջական ու արդար ճանաչման»։ Հիլարի Քլինթոն

Ամերիկայի Հայ դատի յանձնախումբի (ANCA) կայքի փոխանցումով՝ ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը պատասխան նամակ է յղեր ANCA-ի նախագահ Քէն Խաչիկեանին, ուր շարադրեր է Հայոց ցեղասպանութեան հարցին մասին իր դիրքորոշումը:



Իր նամակին մէջ, Քլինթոնը մասնաւորապէս նշեր է. «Դուք լուրջ հարց էք բարձրացուցեր: 2011 թուականի Ապրիլ 24-ին՝ նախագահ Պարաք Օպաման յաւերժացուց 1.5 միլիոն հայերու յիշատակը, որոնք սպանուէր են 1915 թուականին կամ ալ Օսմանեան կայսրութեան վերջին օրերուն՝ 20-րդ դարու ամենասարսափելի

գազանութիւններէն մէկուն ժամանակ: 2010 թուականին՝ Հայաստան կատարած այցի ժամանակ, ես այցելէր եմ Ծիծեռնակաբերդ և յարգանքի տուրք մատուցէր այդ աղէտի ժամանակ զոհուածներուն: Իր ապրիլքսանչորսեան ելոյթին մէջ, Օպաման յայտարարէր էր նաեւ, որ պատմութիւնը մեզ կ'ուսուցանէ, որ մեր ժողովուրդները կը դառնան աւելի ուժեղ, երբ անոնք կը ճանչնան իրենց ցաւոտ անցեալը և կ'աշխատին յանուն լաւ ապագայի՝ փոխըմբռնման կամուրջներ նետելու ուղղութեամբ:

Ի աջակցութիւն նախագահի քաղաքականութեան՝ ես նոյնպէս, Հայաստանին ու Թուրքիոյ կոչ կ'ընեմ համատեղ աշխատելու իրենց ընդհանուր պատմութեան վճռման հարցով:

Այդ սարսափելի իրադարձութիւններուն վրայ՝ համատեղ աշխատելու շնորհիւ միայն, անոնք կը կարողանան հասնիլ փաստերու ամբողջական, անկեղծ և արդար ճանաչման: ԱՄՆ-ը շարունակելու է աջակցիլ հայ և թուրք պաշտօնեաներու համարձակ քայլերուն, որպէսզի նպաստէ անոնց երկխօսութեան, որով կը ճանաչուի անոնց ընդհանուր պատմութիւն ունենալը և կարելի կ'ըլլայ հասնիլ յառաջընթացի գրանցման: Ես համոզուած եմ, որ անոնց ջանքերը կը դառնան երկու ժողովուրդներու և ընդհանրապէս տարածաշրջանի խաղաղ ապագայի ու բարգաւաճման հիմքը»:

Նշենք, որ Փետրուար 9-ին, ANCA-ն 6 էջնոց նամակ էր յղեր Հիլարի Քլինթոնին, ուր շարադրեր էր 10 քոնքրէթ հարց, կապուած՝ Հայոց ցեղասպանութեան հարցով, Թուրքիոյ վերաբերեալ ԱՄՆ-ի ներկայիս և նախորդ վարչակազմերու վարած քաղաքականութեան հետ: Ի դէպ, Փետրուարի վերջին, ամերիկացի 61 քոնկրետականներ ստորագրեցին նամակի մը տակ, ուր իրենց անհամաձայնութիւնը յայտնեցին Հայոց ցեղասպանութեան հարցին մէջ՝ ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնի որդեգրած դիրքորոշման հետ: Ատիկա մասնաւորապէս կը վերաբերէր՝ ոչ վաղ անցեալին, Քլինթոնի հնչեցուցած այն յայտարարութեան, թէ «Հայոց ցեղասպանութիւնը կը համարուի պատմական հարց» (այսինքն՝ ատով պետք է զբաղին միայն պատմաբանները): Նմանապէս, նամակին մէջ, Հիլարի Քլինթոնը որակուեր էր որպէս ամերիկեան դիւանագիտութեան ամենաթրքամետ ներկայացուցիչը:

«Ժառանգութիւն» Կուսակցութեան Նախագահը Կը Յիշեցնէ Հայոց Ցեղասպանութեան Գերմանիոյ Մեղսակցութիւնը

Վերջերս Գերմանիոյ Պունտեսթակի Գերմանիոյ Քրիստոնեայ-դեմոկրատական միութեան եւ Քրիստոնեայ-սոցիալական միութեան խմբակցութեան արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովին մէջ քննարկուած է դարաբաղեան խնդիրին վերաբերեալ ոչ հայանպաստ փաստաթուղթ, որուն առնչութեամբ նաեւ յառաջիկային յայտարարութիւն պիտի տարածուի: Այս առնչութեամբ «Ժառանգութիւն» կուսակցութեան նախագահ Ռաֆֆի Յովհաննիսեան նամակ յղած է ՔԴՄ/ՔՍՄ խորհրդարանական ղեկավար Վոլքեր Գաուտըրին:



Նամակին մէջ կը կարդանք.

Յարգելի գործընկեր,

Ինձի յայտնի դարձած է, որ ձեր խորհրդարանական խմբակցութիւնը՝ Եւրոպայի ժողովրդական կուսակցութեան մէջ մեր գործընկերը, շուտով յայտարարութիւն պիտի ընդունի կամ



առնուազն մտադիր է քննարկելու Լեռնային Ղարաբաղի վերաբերեալ բանաձեւի նախագիծ: Քաղաքական խօսքի ազատութիւնը անչափ կարեւոր է, սակայն ճշմարտութիւնը գերազոյն արժէք է:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը (Արցախ) օրինական ճանապարհով ստեղծուեցաւ 1991ին՝ լիովին համապատասխանելով այդ ժամանակ գերակայ խորհրդային օրէնսդրութեան եւ միջազգային իրաւունքի հիմնարար սկզբունքներուն, որոնք արտայայտուած են ինքնիշխան պետութիւններու ձեւաւորման եւ ճանաչման առնչուող Մոնթեւիտէոյի համաձայնագիրին մէջ:

Ոչ մէկը, ոչ ձեր պետութիւնը եւ ոչ ալ մեր՝ հիմք ունի սահմանափակելու այլոց հնամեայ, թէ նորաստեղծ, ազատութեան եւ ինքնորոշման հիմնարար իրաւունքը: Ասիկա յատկապէս ճշմարիտ է Լեռնային Ղարաբաղի պարագային, որուն ժողովուրդը այն նոյն ժամանակ, երբ կը փլուզուէր ձեր մայրաքաղաքը երկար ժամանակ բաժնած Մեծ Պատը, վերացուց Ստալինեան «բաժանիր եւ տիրիր» ժառանգութիւնը՝ սկզբնաւորեց սահմանադրականութեան, ազատութեան ու անկախութեան յիրաւի յաջողած փնտրտութիւնը եւ պաշտպանեց իր հայրենակալուածքը խորհրդային, այնուհետ ատրպէյճանական անյաջող յարձակումներէն:

Յետպատերազմեան Գերմանիան, ի տես նախորդ վարչակարգին կողմէ մարդկութեան դէմ գործած յանցանքներուն առերեսուելու, փոխհատուցելու եւ յաղթահարելու իր բացառիկ փորձառութեան եւ անոր իբրեւ արդիւնք ձեռք բերուած իրաւունքներու, ժողովրդավարութեան, խաղաղութեան եւ անվտանգութեան վերականգնման համաշխարհային առաջնորդութեան, պէտք է ըլլայ առաջինը, որ պիտի ճանչնայ ձեւաւորուող պետական միաւորներու օրինական ստեղծումն ու տարածքային ամբողջականութիւնը եւ պատմական անարդարութիւններու ուշացած ուղղումը:

Թէ՛ ներպետական, թէ՛ միջազգային յարաբերութիւններու մէջ օրէնքի, կամ աւելի ստոյգ՝ իրաւունքներու գերակայութիւնը կը գործէ ընդդէմ sui generis ժամանակավրէպ թեզի արհեստական եւ հատուածական կիրառման: Աւելին, Գերմանիոյ երբեմնի մեղսակցութիւնը Հայոց Ցեղասպանութեան ու Մեծ Հայրենազրկման, որուն մասին պատշաճ կը վկայեն ձեր սեփական դիւանագիտական եւ ռազմական պահոցները, յաւելեալ հիմք է պաշտօնապէս ճանչնալու Հոլոքոսթին նախորդած այդ անօրինակ ոճիրը եւ Թուրքիոյ Հանրապետութեան հետ մէկտեղ ձեռնարկելու անհրաժեշտ քայլեր՝ ժխտողականութեան այս ամօթալի դարաշրջանը փակելու, Հայկական լեռնաշխարհի արեւմտեան հատուածին բռնազաւթման անդրադառնալու եւ հայ ժողովուրդին իրաւագոր առնչակցութիւնը իր հայրենիքին հետ վերականգնելու համար:

Թուրքիոյ եւ Ատրպէյճանի հետ յարաբերութիւններու իրական, ոչ շինծու կարգաւորումը Հայաստանի համար վճռորոշ նշանակութիւն ունի, սակայն ոչ երբեք

պատմական յիշողութեան, արդի իրաւունքներու եւ մարդկային արժանապատուութեան հաշուին: Il faut assumer l'histoire. Բոլոր պետութիւններուն եւ բոլոր կուսակցութիւններուն մէջ յատկապէս դուք պէտք է լաւագոյնս ընկալէք արժէքներու, խղճի եւ հրապարակային քաղաքականութեան այս հրամայականը:

Յարգանք՝ Ռաֆֆի Յովհաննիսեան «Ժառանգութիւն» կուսակցութեան նախագահ, ՀՀ ԱԺ պատգամաւոր Հայաստանի արտաքին գործոց առաջին նախարար Հայաստանի Հանրապետութիւն

Աղբիւր՝ tert.am

Էկեմէն Պաղըշը սպառնացեր է Կիպրոսի թրքական հատուածը միացնել Թուրքիոյ

Թուրքիոյ՝ Եւրոմիութեան հետ հարցերու նախարար Էկեմէն Պաղըշը հերթական տարօրինակ յայտարարութիւնն է ըրեր:



Այս անգամ ան յայտարարեր է, թէ Կիպրոսի ինդրի կարգաւորման ուղիներէն մէկը՝ զայն Թուրքիոյ միացնելն է: Ինչպէս կը տեղեկացնէ թրքական Star-ը, Կիպրոսի թրքական հատուածին մէջ լոյս տեսնող «Կիպրոս» թերթին տուած հարցազրոյցին մէջ, Էկեմէն Պաղըշը՝ Կիպրոսի ինդրի լուծման հետ կապուած հարցին մասին անդրադառնալով, նշեր է. «Կամ Կիպրոսի 2 պետութիւնները կը միաւորուին մէկ կառոյցի մէջ կամ ալ

Կիպրոսի թրքական հանրապետութիւնը կարող է միացուիլ Թուրքիոյ: Այս բոլոր տարբերակները սեղանին են», - ըսեր է Պաղըշը:

Ես Հայաստանը Լքել Չեմ Ուզեր՝ Ի Վերջոյ Պէտք է Պայքարինք Արդարութեան Հասնելու Համար.

Նարեկ Յարութիւնեան

«Նարեկացի» արուեստի միութիւն հիմնադիր տնօրէն Նարեկ Յարութիւնեան Պետական եկամուտներու կոմիտէի փոխնախագահ Արմէն Ալավերտեանի յայտարարութիւնը կը համարէ անհիմն:



Փետրուարի վերջաւորութեան հրաւիրուած ասուլիսին, սփիւռքահայ ներդրողին առնչուող գործի մանրամասնութիւնները ներկայացուցին անոր փաստաբանները, ինչպէս նաեւ՝ անձամբ Նարեկ Յարութիւնեանը: Յիշեցնենք, որ «GH Storage Enterprise» ընկերութեան դէմ Պետական եկամուտներու կոմիտէն կազմած էր վերստուգման ակտ, որուն հիման վրայ ընկերութեան տնօրէն Նարեկ Յարութիւնեանին եւ անոր

աշխատակիցներուն նկատմամբ յարուցուած էր քրեական գործ՝ Հայաստանի Քրեական օրէնագիրքի 205 յօդուածով՝ հարկերէն չարամտօրէն խուսափելու համար: Ընկերութիւնը վիճարկած էր ակտը՝ դիմելով վարչական դատարան, որ մերժուած է:

Նարեկ Յարութիւնեան նախ անդրադարձաւ Արմէն Ալավերտեանի յայտարարութեան, թէ Նարեկ Յարութիւնեանի գործը տիպիկ սփիւռքահայերուն բնորոշ գործերէն է, որոնք Հայաստանը կը դիտեն եկամուտ ստանալու աղբիւր եւ այդ երեւոյթը կ'ուղեկցի հարկերը չվճարելով: Այնուհետեւ Պետական եկամուտներու կոմիտէի փոխնախագահը աւելցուցած էր, որ «երեք տարի Յարութիւնեանին պատկանող «GH Storage Enterprise» ընկերութիւնը մագարոնեղէն եւ ալիւր կը ներածէր եւ չեմ կարծեր բարեգործական նպատակով»: «Յարգելի պարոն Ալավերտեան, դուք կը խաղաք մեր ընտանիքի արժանապատուութեան հետ:

Կը խօսիմ բարեգործութեան մասին, ոչ իմ սրտով, որովհետեւ մեծ հայրիկս կ'ըսէր, բարեգործութեան մասին չեն խօսիր: Մեր ընտանիքի բարեգործութիւնը սկսած է երկար ժամանակէ ի վեր, դեռ 40-50ականներուն, Հալէպի մէջ, ապա 1959 թուականէն արդէն Հայաստանի մէջ», - ըսաւ ան եւ նշեց, որ իրենք հարկերէն չարամտօրէն խուսափող չեն եւ թող ըլլայ արդար որոշում եւ ինքը կը հանաձայնի վճարելու հարկերը:

Ըստ Պետական եկամուտներու կոմիտէին, այդ հարկերէն խուսափելու չափը կը կազմէ 63,5 միլիոն դրամ: «Նարեկացի» արուեստի միութեան հիմնադիր տնօրէնը նշեց, որ իր ընկերութեան հաշիւները սառեցուած են, որ, ըստ անոր՝ անօրինական է: Մեր հաշիւները կալանքի տակ են, անոնք սառեցուցած են: Մենք ունինք հարկային պարտաւորութիւններ, որոնք պէտք է վճարենք սառեցուած հաշիւներու հաշւոյն: Դատարան դիմեցինք, բայց մերժում ստացանք, ըսաւ Նարեկը:

Փաստաբանները՝ գործի ոչ լիարժէք քննութիւն իրականացնելու վերաբերեալ՝ օրինակ բերին շաքք մը խախտումներ, որոնցմէ յատկապէս առանձնացուցին գործէն «տարօրինակ» ձեւով դուրս մնացած երկու անձերու՝ Սեւակ Արծրունին եւ եւ Արտեմ Մարտիրոսեանը, որոնց ցուցմունքներուն հիման վրայ քրեական գործ յարուցուած էր: Դեռ աւելին, Սեւակ Արծրունին այդ ժամանակաշրջանին

հանդիսացած է իբրեւ ընկերութեան լիազօրուած անձ, որ զբաղած է բոլոր թէ փաստաթղթային եւ թէ միւս հարցերով:

Մինչդեռ այսօր անոնք Հայաստան չեն գտնուիր: Նարեկ Յարութիւնեան կոչ ըրաւ բոլոր սփիւռքահայերուն հետեւողական ըլլալ այս գործին, հասկնալու համար ինչ կը կատարուի Հայաստանի մէջ, որ հասարակ հաշուեյարդար է եւ այլ նպատակներ կը հետապնդէ: Ասուլիսին ներկայ «Հետք» կայքի խմբագիր Էտիկ Պաղտասարեան, որ սեփական լրագրողական հետաքննութիւն իրականացուցած է խնդրի առնչութեամբ՝ մեկնաբանեց, թէ իր կարծիքով ինչ նպատակ ունին Նարեկ Յարութիւնեանին նկատմամբ նման հետապնդումները: Ըստ հետաքննող լրագրողին՝ հիմնական թիրախը ժամացոյցներու գործարանն է, որուն սեփականատէրն է սփիւռքահայ գործարարը: Մինչդեռ այս գործարանին բաժնետոմսերուն վրայ աչք ունին Հայաստանի յայտնի քանի մը մարդիկ, որոնց անունները Էտիկ Պաղտասարեանը չնշեց:

«Մեակը այստեղ գոհ է: Այստեղից գնալով՝ Մեակը փախել է՝ փրոպլեմներից դուրս մնալու համար: Գործի առանցքը ժամացոյցների գործարանն է, եւ ինչ-որ մարդիկ փորձում են ժամացոյցների գործարանի բաժնեմասը վերցնել», - ըսաւ Պաղտասարեան: Նարեկ Յարութիւնեան յայտարարեց, որ հակառակ գործադրուող ջանքներուն, ինքը չի լքեր Հայաստանը եւ կը պայքարի արդարութեան համար: «Ես Հայաստանը լքել չեմ ուզեր: Ի վերջոյ պէտք է կարենանք հաստատել, որ կայ արդարութիւն եւ պէտք է պայքարինք անոր հասնելու համար», - նշեց ան:

Tert.am

Այլ լուրեր

ՍՈՒՄԿԱՅԻԹԻ ԶԱՐԴԵՐՈՒ 24ՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ

Լրացաւ Սումկայիթի ջարդերուն 24րդ տարելիցը: 1988 Փետրուար 27ին Պաքուն 20 քմ. հեռաւորութեան վրայ գտնուող Սումկայիթի մէջ Ազերպայճանցիները սկսան Հայերու սպանողը եւ թալանը, որ տեւեց երեք օր:



Այդ երեք օրուան ընթացքին սպաննուեցան աւելի քան 100 հոգի, իսկ վիրաւորներու թիւը կը հաշուէր տասնեակներով: Պարզուեցան վայրագութեան աննկարագրելի տեսարաններ: Փետրուար 29ին Սումկայիթ մտաւ խորհրդային բանակը: Այս կոտորածը՝ Խորհրդային Միութեան նոր պատմութեան ցեղային

առաջին բնութիւնն էր: Ան մեծ դեր ունեցաւ Ղարաբաղեան պատերազմի բռնկման մէջ:

Սումկայիթի կոտորածէն ետք՝ միջազգային հանրութեան հակազդեցութեան բացակայութենէն քաջալերուած, Ազերպայճանի իշխանութիւնները շարունակեցին իրենց հակահայկական քարոզչութիւնը, որ յանգեցուց 1990 Յունուարին Պաքուի կոտորածներուն՝ պատճառելով հարիւրաւոր անմեղ հայ զոհեր: 1988էն 1990, ազերպայճանական իշխանութիւններուն կողմէ գործադրուած՝ Հայերու զանգուածային ջարդերու հետեւանքով, Ազերպայճան գրեթէ ամբողջութեամբ հայաթափուեցաւ, առնուազն կէս միլիոն Հայեր հոնկէ փախուստի դիմեցին կամ տեղահանուեցան: Այս կոտորածները պատասխան էին Լեռնային Ղարաբաղի հայ բնակչութեան՝ ինքնորոշման իրաւունքի պահանջով խաղաղ ցոյցերուն: Սումկայիթի զոհերուն յիշատակը ոգեկոչուեցաւ աշխարհի հայաշատ բազմաթիւ անկիւններուն մէջ:

Օրինագիծի մերժումը կը բողոքարկուի

Ֆրանսացի իրաւապաշտպանները կրնան Մարդու իրաւունքներու եւրոպական դատարանին մէջ վիճարկել Փետրուար 28-ին Ֆրանսայի Սահամանադրական խորհուրդի ընդունած որոշումը, որով ցեղասպանութիւններու ժխտումը քրեականացնող օրինագիծը ամբողջովին հակասահմանադրական է ճանաչուեր: Այս մասին «Ա1+»-ին Փարիզէն յայտնած է ֆրանսահայ իրաւապաշտպան Ռաֆայէլ Գալֆայեանը:



Իր խօսքով, Սահմանադրական խորհուրդի այս որոշմամբ, Յունուար 23-ին՝ Ծերակոյտին կողմէ ընդունուած օրինագիծը այլեւս առ ոչինչ է, եւ նմանատիպ օրէնք ընդունելու համար գործընթացը պէտք է սկսիլ սկիզբէն՝ Ազգային Ժողովէն: Բայց մինչ այդ, ըստ իրեն, շահագրգիռ

իրաւաբանները կ'ուսումնասիրեն Խորհուրդի որոշումը:

«Եւ եթէ գտնենք, որ անիկա լաւ հիմնաւորուած չէ, կը դիմենք Մարդու իրաւունքներու եւրոպական դատարան», - ըսած է պարոն Գալֆայեանը: Իրաւաբանի խօսքով, մինչ այժմ յայտնի տուեալներով, սահմանադրական Խորհուրդը իր որոշումը հիմնաւորեր է այն փաստարկով, թէ օրինագիծը կը խախտէ ազատ արտայայտուելու իրաւունքը:

«Մենք կը զարմանանք, որովհետեւ օրինագիծի քննարկումներուն ընթացքին, բազմիցս ապացուցուեւ է, որ խօսքի ազատութեան հետ օրինագիծը խնդիրներ չի յարուցեր: Մարդու Իրաւունքներու Եւրոպական Դատարանը այս կապակցութեամբ դրական որոշումներու շարք մը նախադէպեր արդէն իսկ ունի», - եզրափակեց Ռաֆայէլ Գալֆայեանը:

Ինչ կը վերաբերի Ֆրանսայի նախագահ Նիքոլա Սարքոզիին, ան յանձնարարեր է երկրի կառավարութեան՝ ցեղասպանութիւններու վերաբերեալ նոր օրինագիծի թեքութիւնը պատրաստել, հաշուի առնելով Սահմանադրական խորհուրդի որոշումը: Սարքոզիի յայտարարութեան համաձայն, «նախագահն ի գիտութիւն է ընդունել որոշումը» եւ «գնահատել բոլոր անոնց հիասթափութիւնն ու խոր ցաւը, ովքեր երախտագիտութեամբ եւ յոյսով էին արձագանգէր այդ օրէնքի ընդունման, որ ուղղուած էր ժխտումէն իրենց պաշտպանութեան»:

Սարքոզի «յանձնարարեր է կառավարութեան նոր թեքութիւնը պատրաստել, հաշուի առնելով Սահմանադրական խորհուրդի որոշումը»:

Քրիստոնէական Իւրացուած Եկեղեցիներու Վերադարձին Հարցով՝ ԱՄՆ Ծերակուտականներ Կը Պահանջեն Ճնշումներու Ենթարկել Անգարան

ԱՄՆ ծերակուտականներ Սքոթ Պրաուն, Տայա Ֆէինսդէն եւ Մարք Քըրք դիմած են ԱՄՆ պետական քարտուղարին՝ պահաջելով ճնշումներու ենթարկել Անգարան, քրիստոնէական իւրացուած եկեղեցիներու վերադարձման եւ կրօնական փոքրամասնութիւններուն

դաւանանքի լիարժէք ազատութեան ընձեռման համար:



Այս մասին կը տեղեկացնէ ԱՄՆ Հայ Դատի գրասենեակը: Ծերակուտականները Թուրքիոյ կոչ ուղղած են՝ վերադարձնելու բոլոր վիճելի եկեղեցիները, ինչպէս նաեւ եկեղեցական գոյքը՝ դպրոցներ, հիւանդանոցներ, յուշարձաններ, նաեւ շարժական գոյքը:

Անոնք նաեւ կոչ ուղղած են հայկական եւ յունական եկեղեցիներուն՝ գոյքի տնօրինման եւ առանց խոչընդոտներու կրօնական հաւաքներու, դասընթացներու կազմակերպման հնարաւորութիւն տալու, ինչպէս նաեւ ունենալու նախարարութիւն՝ զբաղելու համար աղքատներու, հիւանդներու եւ կրօնական այլ հարցերով: ԱՄՆ Հայ Դատի գրասենեակի ղեկավար Արամ Համբարեան



յայտարարած է, որ կը հաւատայ, որ երկու կուսակցութիւններուն կողմէ Ծերակոյտ ներկայացուող բանաձեւը պիտի ընդունուի: Անոր խօսքով, յանուն բանաձեւի ընդունման իրենք պատրաստ են աշխատելու երկու կուսակցութիւններու ներկայացուցիչ

ծերակուտականներուն հետ:

Tert.am

Սուրիոյ Մէջ Քիւրտերը «Արեւմտեան Քիւրտիստան» Հռչակած Են

Մինչ սուրիական կառավարութիւնը կը պայքարի հակակառավարական ցոյցերուն դէմ, իսկ երկրին մէջ քաղաքացիական պատերազմ սկսած է, երկրի քիւրտերը յայտարարած են Սուրիայէն անջատուելու եւ «Արեւմտեան Քիւրտիստան» հռչակելու մասին: Ինչպէս կը տեղեկացնէ թրքական haber7 կայքը, քիւրտերը «Արեւմտեան Քիւրտստանի» մայրաքաղաք հռչակած են Աֆրին քաղաքը:



Շրջանի քաղաքներուն եւ գիւղերուն անունները նոր քարտէսներուն մէջ սկսած են գրել բացառապէս քրտերէն, իսկ Աֆրինի մուտքը ազդարարող վահանակը՝ քրտերէն եւ արաբերէն: «Արեւմտեան Քիւրտստան»ի սահմանները, ըստ կայքի, կը սկսի Թուրքիոյ հետ 870 քմ. երկարութեամբ սահման ունեցող Սուրիոյ

սահմանագիծէն 50 քմ. խորութեամբ: Քիւրտ զինեալները, որոնք Սուրիոյ 11 Հոկտեմբեր 2001ին սպաննուած Մեշալ Թեմոյի յետնորդները կը համարուին, Փետրուար 26ին անջատուած էին սուրիական զօրքերէն եւ յայտարարած PKK-ի եւ Ասատի զօրքերուն դէմ պայքար սկսելու մասին:

Tert.am

Հայաստանի մէջ սկսեր է խորհրդարանի պատգամաւորներու թեկնածութեան առաջադրումը

Հայաստանի մէջ, Մարտ 12-ին սկսեր է խորհրդարանի պատգամաւորներու թեկնածութեան առաջադրումը համամասնական եւ մեծամասնական կարգով:



Այն կը շարունակուի 11 օր:

Մինչեւ Մարտ 22-ի ժամը 18.00-ը, Մայիս 6-ին նշանակուած խորհրդարանական ընտրութիւններուն մասնակցիլ ցանկացող բոլոր քաղաքական կուսակցութիւնները եւ պլոքները պէտք է Կեդրոնական ընտրական յանձնաժողովին ներկայացնեն իրենց գերագոյն մարմիններուն կողմէ հաստատուած պատգամաւորի

թեկնածուներու համամասնական ցուցակները եւ անհրաժեշտ բոլոր փաստաթուղթերը:

Այդ նոյն ժամանակահատուածին, շրջանային ընտրական յանձնաժողովներ պէտք է ներկայացնեն համամասնական շրջաններէն ներս՝ պատգամաւորի թեկնածութեան առաջադրման բոլոր անհրաժեշտ փաստաթուղթերը: Ընտրութիւններուն իրենց մասնակցութեան մասին արդէն յայտարարեր են իշխող կոալիցիայի երեք կուսակցութիւնները՝ Հայաստանի Հանրապետական կուսակցութիւնը, «Բարգաւաճ Հայաստանը» եւ «Օրինաց երկիրը», ընդդիմադիրներէն՝ Հայ ազգային քոնկրետը, Հայ յեղափոխական դաշնակցութիւնը, «Ժառանգութիւնը» եւ «Ազատ ժողովրդավարները», Հայաստանի Կոմունիստական կուսակցութիւնը:

Հայաստանի Ազգային ժողովէն ներս, հինգերորդ գումարման ընթացքին, կ'ընտրուին 90 պատգամաւորներ կուսակցական ցուցակներով (համամասնական համակարգով), 41-ը՝ մեծամասնական ընտրատեղամասերով (մեծամասնական կարգով):

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Այլագան

Ապտիւլլահ Կիւլին անմիջականօրէն ենթարկուող Պետական վերահսկիչ պալատը հրապարակեր է Տինքի սպանութեան մասին զեկոյցը

Թրքական Hürriyet թերթի փոխանցմամբ՝ Թուրքիայի նախագահ Ապտիւլլահ Կիւլին անմիջականօրէն ենթարկուող Պետական վերահսկիչ պալատը (DDK) աւարտին է հասցուցեր Ստամպուլի հայկական «Ակօս» շաբաթաթերթի հիմնադիր-

խմբագրապետ Հրանդ Տինքի սպանութեան գործով մօտ մէկ տարի առաջ սկսած յետաքննութեան աշխատանքները:



Այս մասին նշուած է նախագահի համացանցային կայքին մէջ: Այդ նպատակով DDK-ն պատրաստել է 653 էջնոց զեկոյց, ուր նշուած է, որ անվտանգութեան ծառայութիւններն ու ոստիկանութիւնը նախապէս իմացել են Տինքի սպանացող վտանգի մասին, սակայն քայլեր չեն ձեռնարկել զայն կանխելու ուղղութեամբ և չեն

համագործակցել Տինքի կեանքը պահպանելու հարցով:

Բացի ատկէ, նշուած է որ Տինքի սպանութեան յետաքննութեան ժամանակ եղել են թերացումներ, և որ զանոնք իրականացուցած պաշտօնեաները պէտք է դատուին առաջին ատեանի դատարանին մէջ:

Յիշեցնենք, որ նախորդ տարուայ Յունուարի վերջերուն, Ապտիլլահ Կիլը DDK-ին հրահանգել էր մանրակրկիտ ուսումնասիրել Տինքի սպանութեան գործն ու 4 տարի ընթացող դատավարութիւնը: Ատկէ օրեր առաջ ալ Կիլը յայտարարել էր, որ ամօթ էր զգացել, երբ Մարդու իրաւունքներու եւրոպական դատարանը (ՄԻԵԴ) Թուրքիոյ իշխանութիւնները դատապարտել էր՝ Տինքի սպանութեան կանխումի հարցով և կայացող դատավարութեան ժամանակ, յանցաւոր անտարբերութիւն ցուցաբերելու համար:

Շատ Հայեր Կը Տիրապետեն Թրքերէնին, Իսկ Հայերէնը Թուրք Հասարակութեան Համար Ընդհանրապէս Անծանօթ է. Թուրք Փրոֆէսոր

Պոլսոյ «Քատիր Հաս» համալսարանին մէջ հայերէն լեզուի դասնթացքներ կը կազմակերպուին:



Փետրուար 7ին սկսաւ դասընթացքի երկրորդ կիսամեակը: Անիկա պիտի տեսէ մինչեւ Ապրիլ 12: Դասընթացքին նպատակն է զարգացնել մասնակիցներուն հայերէն խօսելու, կարդալու եւ գրելու հմտութիւնները: Անիկա բաց է հանրութեան համար: Դասընթացքին պիտի կարդացուին հայերէն փոքրիկ հեքիաթներ եւ պատմութիւններ ու



պիտի լսուին հայերէն երգեր, որոնք մասնակիցներուն հնարաւորութիւն պիտի տան ժամանակակից ձեւով հայերէն սորվելու: Այս մասին գրուած է թրքական «Մես Թուրքիէ» կայքին մէջ տեղադրուած համալսարանի դասընթացքին մասին ծանուցող յայտարարութեան մէջ:

Դասընթացքը կը ծանրանայ ոչ միայն քերականութեան վրայ, այլեւ՝ լեզուի բոլոր առանձնայատկութիւններուն: Ծրագիրը կազմուած է խօսելու, լսելու եւ կարդալու մէկ ամբողջական սկզբունքով: Դասընթացքին մասնակցութեան թիւին համեմատ՝ կ'որոշուի յաջորդ փուլերու շարունակութիւնը, կ'ըսուի յայտարարութեան մէջ: Ըստ կայքին՝ համալսարանի տնօրէն փրոֆէսոր Մուսթաֆա Այտըն տարածաշրջանի երկիրներուն լեզուները գիտնալու կարեւորութիւնը շեշտելով ըսած է, թէ այդպիսով մարդիկ կարելիութիւն պիտի ունենան իրարու հետ շփուելու եւ զիրար լաւ հասկնալու:

«Մանաւանդ Հայաստանի հետ, երբ ոչ դիւանագիտական յարաբերութիւն ունինք եւ ոչ ալ դեսպանատուն: Շատ մը հայեր թրքերէն լեզուին կը տիրապետեն, իսկ հայերէնը թուրք հասարակութեան համար ընդհանրապէս անծանօթ է», - ըսած է ան:

Համալսարանի «Կեանքի ընթացքին (տեւողութեամբ) ուսուցում» կեդրոնի տնօրէն Սերտար Տինլէր կ'ըսէ, թէ թրքական պետութեան «հարեւաններու հետ զերօ խնդիր» քաղաքականութիւնը աչքի առջեւ ունենալով՝ թուրք հասարակութիւնը պէտք է հարեւաններուն հետ աւելի շատ երկխօսութեան մէջ մտնէ: Այս պատճառով ալ հարեւաններուն, ներառեալ Հայաստանի, լեզուները գիտնալը առանցքային դեր կը խաղայ:

Դասընթացքի դասախօս Հայաստանի քաղաքացի գիտութեան թեկնածու Գեորգ Քալլոշեան, մասնակիցներու դասընթացքին նկատմամբ ունեցած հետաքրքրութենէն գոհ է: «Դասընթացքին մասնակցողները տարբեր պատճառներ ունին: Քանի մը ուսանող Կովկասի մասին գիտական ուսումնասիրութիւններ ընելու համար կ'ուզեն առնչուիլ հայերէնին հետ, զբօսաշրջիկներու ուղեկցող մը Երեւանի պատմական շէնքերուն վրայի գրութիւնները կարդալու եւ մշակութային ժառանգութիւնը բացայայտելու համար կ'ուզէ հայերէն սորվիլ, երաժիշտ մը հայերէնի իմացութեամբ կ'ուզէ հայկական երգերուն ծանօթանալ», - կ'ըսէ հայ դասախօսը: Իսկ բժիշկ մը իր հայ հիւանդներուն հետ շփուելու համար հայերէն կը սորվի:

« Հայկական Սուրբ Փրկիչ հիւանդանոցին մէջ կ'աշխատիմ, եւ այնտեղ շատ հայ հիւանդներ կ'ունենամ, ինչպէս նաեւ Պոլսոյ հայ համայնքին հետ ալ լաւ յարաբերութիւններ ունիմ», - կ'ըսէ բժիշկը: Դասախօս Քալլոշեան կը յատնէ, թէ Երեւանի մէջ թրքերէն ուսուցանող շատ կեդրոններ կան, բայց Թուրքիոյ մէջ հարեւան երկրի լեզուին նկատմամբ նոյնպիսի հետաքրքրութիւն չկայ: «Քատիր Հաս» համալսարանը, Սեպտեմբերէն սկսեալ դասընթացքները Անգարա պիտի տեղափոխէ: Ըստ համալսարանի տնօրէնին՝ այն ժամանակ աւելի շատ թիւով դիւանագետներ եւ պետական պաշտօնեաներ պիտի մասնակցին: «Արտաքին

գործոց նախարարութիւնը իր աշխակիցներուն դասական անգլերէն, ֆրանսերէն լեզուներուն կողքին կը խրախուսէ նաեւ բարդ լեզու մը գիտնալը»,- կը յայտնէ համալսարանի տնօրէնը:

Tert.am

ԻՍՐԱՅԷԼ - ԿԻՊՐՈՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ

Թրքական «Միլլիյէթ» օրաթերթին համաձայն, միօրեայ այցելութեամբ Փետրուար 17ին Կիպրոս գացած՝ Իսրայէլի վարչապետ Պենիամին Նեթանիահու Կիպրոսի նախագահ Տիմիթրիս Խրիսթոֆիասի հետ ստորագրած է համաձայնագիր մը, որուն հիման վրայ՝ իսրայէլեան բանակի ցամաքային ուժերը եւ ծովուծը կարելիութիւն կը ստանան Կիպրոսի տարածքը օգտագործելու: Համաձայնագրին նպատակը Կիպրոսի յունական հատուածին մէջ բնական կազի հետազոտումն է:



Սակայն Իսրայէլի վարչապետը չէ բացառած Հարաւային Կիպրոսի մէջ իսրայէլեան ռազմական խարխիսի մը ստեղծումը: Այցելութեան ընթացքին կողմերը քննարկած են նաեւ

ուժանիւթի, գիւղատնտեսութեան, առողջապահութեան եւ ծովային գործակցութեան առընչուող հարցեր: Իսրայէլի եւ Կիպրոսի միջեւ յարաբերութիւններու եւ

գործակցութեան այս սերտացումը Թուրքերու կողմէ բնութագրուած է որպէս հակաթուրք քաղաքականութիւն, ինչպէս կը հաւաստէ «Հիւրրիյէթ»:

Եթէգիրքերը ունենային մարդկային լեզու, մի բան կ'ըսէին՝ փրկէք մեզ

Գիրքը, թերեւս առաւել բարդ ու մեծ հրաշալիքն է այն բոլոր հրաշալիքներէն, որ մարդկութիւնը ստացեր է ապագայի երջանկութեան և հօգործեան ճանապարհին:

Արդէն 23 տարի է, որ Հրագդան քաղաքին մէջ կը գործէ գիտատեխնիկական գրադարանը, որ կը պատկանի տնտեսական նախարարութեան: Գրադարանը ունի բազմատեսակ գրականութիւն, մօտ 500 տարբեր տարիքի ընթերցող՝ մանկավարժներ, գիտաշխատողներ, ուսանողներ, աշակերտներ: Այսքան հարուստ

գրականութիւն ունեցող գրադարանի շէնքային պայմանները ուղղակի աննկարագրելի են:

«Նորամուծութեան և ձեռներեցութեան ազգային կեդրոն» Հրազդանի մասնաճիւղի տնօրէն Օֆիկ Մկրտչեանի խօսքերով՝ ամբողջ անձրեւաջուրը, ձեան հալոցքի ջուրը կը լեցուին ներս, չնայած մէկ մասը վերանորոգել են, բայց հիմնականին մէջ, գիրքերը կը գտնուին մութ ու խոնաւ վայրի մէջ. «Համայնքային իշխանութիւններն էլ թող մտածեն մի բանով օգնեն, չէ՞ որ գրադարանից օգտուում են հրազդանցիները»:



Այստեղ գտնուող գիրքերը կարծես մարդկային լեզու առնէին՝ ըսելով. «Փրկէք մեզ»: Պահեստարանը, ուր կը գտնուէր ամբողջ գրականութիւնը, մութ էր ու խոնաւ, այդ պատճառով ալ, դարակներու ներքեւի հատուածի գիրքերը բորբոսեր էին: Աւելորդ է խօսիլ ջեռուցման մասին. Աշխատողները՝ ցուրտին, անգամ վերարկուները չեն հաներ:

Ըստ Օֆիկ Մկրտչեանի՝ ընթերցողները ստիպուած կ'ըլլան ընթերցել գրականութիւնը փոքր սենեակին մէջ, որ կը ջեռուցուի էլեկտրական սալիկով, եւ ուր կը նստին գրադարանի աշխատողները: Գրադարանին մէջ, կայ ավճար համացանց, որմէ կ'օգտուին ընթերցողները:

Այս խոնաւ պայմաններուն մէջ, կը պահուի 7830 գիրք-գրականութիւն, 11 200 ամսագիր, 1900 թերթ, 2600 թերթիկ, 14 արտադրական եւ 1 շինարարական կատալոկ: Աշխատողները յոյս ունին, որ օրերէն մէկ օր շէնքը կը վերանորոգուի:

Նելլի Կարապետեան

(արեւմտահայերէնի վերածուած)

Խարտալեանի «Մեծ Մօրս Դաջուածքները» Շարժանկարը Յուզած է Թուրք Հանդիսատեսը

Պոլսոյ AFM Fitash Beyoglu շարժանկարի հսկայ ցուցասրահի մէջ Մարտ 15ին ցուցադրուած է Սիւզան Խարտալեանի «Մեծ մօրս դաջուածքները» շարժանկարը:



Անիկա ներկայացուած է Պոլսոյ Filmmor Կանանց միջազգային փառատօնին ծիրէն ներս: Շարժանկարի ներկայացումը իրականացած է լեփ-լեցուն դահլիճի մէջ. ներկայ եղած են թրքական ընդդիմութեան ներկայացուցիչներ, գիտնականներ, բազմաթիւ յայտնի մարդիկ, ինչպէս նաեւ՝ Հրանդ Տինքի ընտանիքին փաստաբանը: Շարժանկարը այնպիսի մեծ յաջողութիւն ունեցած է, որ ցուցադրուած է կրկին անգամ:

Ցուցադրութենէն ետք, թուրք հանդիսատեսներէն մէկը, որուն անունը չի նշուիր, ելեկտրոնային հաղորդագրութիւն ուղարկած է՝ շարժանկարի բեմադրիչ Սիւզան Խարտալեանին (բեմադրիչը ներկայ չէ եղած շարժանկարի ցուցադրութեան), եւ կիսած իր տպաւորութիւնները: Հաղորդագրութիւնները բովանդակութիւնը կը վկայէ իրենց հեղինակներու թուրք ըլլալը: Խարտալեան Tert.am-ին փոխանցեց այդ տպաւորութիւնները, զորս կը ներկայացնենք մեր ընթերցողներուն. «Ցուցադրութենէն ետք բոլորը շատ յուզուած էին, ոչ ոք կը խօսէր, կը նայէինք իրարու: Պահ մը ես զիս այնքան մեղաւոր եւ աղտոտ զգացի... կ'ուզէի բարձրաձայն պոռալ:

Ամբողջ ճանապարհին՝ դէպի տուն՝ ես լուռ էի: Հասնելով դրան դիմաց՝ պահ մը նայեցայ երկնքին, աստղերը այնքան պայծառ կը շողային... անոնք օգնեցին ինծի ուժ գտնելու՝ հաւատալու համար լուսաւոր ապագային»:

Այլ թուրք հանդիսատեսի մը՝ Խարտալեանին ուղարկուած հաղորդագրութեան մէջ նշած է, որ բազմաթիւ գրաւոր սպառնալիքներ ուղարկուած են Filmmor Կանանց միջազգային փառատօնի կազմակերպիչներուն, սակայն վերջիններս տեղի չեն տուած, եւ շարժանկարը, այնուամենայնիւ, ցուցադրուած է: Շարժանկարի ծանուցման մէջ գրուած է ..«Մեծ մայրս քիչ մը տարօրինակ էր, ոչ ոք անոր չէ սիրած, երբեք չեն գրկած զինք: Անոր ձեռքի եւ դէմքի վրայի կապոյտ դաջուածքները սարսափազդու էին: Սատանայական նշաններ յիշեցնող այս դաջուածքները վախ կը ներշնչէին: Ո՞րն էր մեծ մօրս սխալը, ինչո՞ւ ան այդքան տարօրինակ էր:



Ո՞վ ըրած էր այդ դաջուածքները. նման հարցեր տալը սխալ էր: Մեծ մօր մասին խօսիլը արգիլուած էր»: Շարժանկարը պիտի ցուցադրուի նաեւ Վանի, Հաքեարըի եւ Չանաքքալէի մէջ:

Նշենք, որ վերջերս շարժանկարը ցուցադրուած էր Շուէտի պետական հեռուստատեսութեամբ, որուն առիթով՝ տեղի թրքական համայնքը մեծ աղմուկ բարձրացուցած էր: Անոնք հազարաւոր բողոքի նամակներ ուղարկած են հեռուստաընկերութեան:

Tert.am

ՆՈՒՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ «ԱԶԱՏ ԽՕՍՔ» ԻՆ

Մի ոմն (Նիկոսիա)-----50 էրօ